№ 247 ՈՒՐԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՈՒՐԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10 № 247

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԵԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և ազգ օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾԵՐՈՒՆԻ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ

„ՄՇԱԿ“

Լրագիրը արժէ 2 ռուբլի։ Մի ամսվանը 1 ռուբլի։

ՆԱՀԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ՝ ՅԻ

մահվան hառասունհին, առաջիկայ կիրակի, ամսոյ 12-ին, ս. պատարագից յետոյ, Վանքի մայր եկեղեցում կը կատարվի հոգեհանգիստ, որի մասին յայտարարում է

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

(ու. կ.) 1—2

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ!!

Ջատագովեցէք օգտվել ձեր ընտրողական իրաւունքներից։ Ջատագովեցէք ձեր անունները մտցնել տալ Պետական Դումայի ընտրողական ցուցակի մէջ, դիմելով Թիֆլիսի քաղաքային վարչութեանը։ Ջատագովեցէք, որովհետև վերջին պայմանաժամը Նոյեմբերի 10-ին է։ Կարելի է դիմել քաղաքային վարչութեանը անձամբ կամ գրաւոր կերպով։

Հարկաւոր բացատրութիւններ և տեղեկութիւններ կարելի է ստանալ «Մշակ»-ի խմբագրատանը։ 1—2

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ „ՆԱԴԵԺԴԱ“ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Բեռներ ուղարկողների, բեռներ ստացողների և գոյքերը կրակից ապահովագրողների յարմարութեան համար

ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

բաց է անընդհատ առաւօտեան ժամը 9-ից մինչև ցերեկվայ 4 ժամը։ Իսկ երեկոները ամեն տեսակ տեղեկութիւններ կարելի է ստանալ օրական ծառայողների մօտ՝ 5—7 ժամը։ Գրասենեակի տէլէֆօն № 108, շտեմարաններինը—№ 370։

Ս.-Պետերբուրգի «Նադեժդա» ընկերութեան գլխաւոր ագենտ՝

Ս. Խ. Սուխանով

(10, 18, 21) առ. 1—3

ԳՐԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՍԱԼՕՆ

(Ազրիւբ-Ցարազի խմբագրութեան կից)

Ուրբաթ, նոյեմբերի 10-ին, ի յիշատակ արտիստ

ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

Եւ յօգուտ նրա որբերի կը կայանայ

ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

ԵՐԵԿՈՅԹ

Բարեհաճ մասնակցութեամբ երաժշտական մասում՝ տ. տ. Ի. Ս. Այդինեանցի, Հ. Կ. Նաւասարդեանի, Ն. Ա. Սափարով-Շէբուեվի, պ. պ. Ի. Մ. Մատկովսկու, Բ. Դ. Շէբուեվի, Լ. Մ. Ցէյլիխի։ Գրական մասում՝ Ռուս, Վրաց և Հայոց դրամատիկ խմբերի արտիստների։

Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին

Մուտքը 2 ր. և տոմսակների թիւը սահմանափակ։

Ոչ ոքի ոչ հրաւէր և ոչ տոմսակ չէ ուղարկվում։ Վաղօրօք կարելի է տոմսակ-ծրագիր ստանալ։

Սալօնում-բիւրօյում

Мадатовская, № 5. 2—2

Բացված է բաժանորդագրութիւն

ՀԱՅԵԼԻ

Գեղարուեստական երգիծաբանական պատկերազարդ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ,

որին աշխատակցում են նկարիչներ՝ պ.պ. Շամշինեան, Զոմմեր, Ճէպէյեան, Ռոդդեւ, «Սլաք», «Սկեռա», «Միֆասոլ» և ուրիշներ։

Տարեկան բաժանորդները կը ստանան պրէմիաներ. 1) Երկու մեծադիր (50×60 սանտիմ) գունատիպ պատկեր հայկական կեանքից, 2) Պատի տախտակ, պատկերազարդ օրացոյց 1908 թ.

Տարեկան գինը պրեմիաներով Թիֆլիսում՝ 4 ր., դուրսը՝ 5 ռուբ.։ Կէս տարին՝ 2 ր. դուրսը՝ 2 ր. 50 կոպ.։ Երեք ամիսը՝ 1 ր., դուրսը 1 ր. 25 կ.։ Արտասահման՝ տարեկան 6 ռուբլի, կէս տարին 3 ռուբլի։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Аели», Дворцовая ул. № 3. կամ Tiflis, Rédaction du journal «Haeli».

Առաջին համարը լոյս կը տեսնի երկուշաբթի, նոյեմբերի 13-ին։

Խմբագիր-հրատարակիչ՝ Բ. Ճէպէյեան

(հ. ու.) առ. 1—2

ԱՐԱՐԱՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿՕՆԵԱԿԸ

առ. (ա. 22, հ. 7, 22, ն. 10) 3—4

Բժիշկ

Տ. Ա. Իսահակեան

ՄԱՍՆԱԳԷՏ՝

ներքին եւ վեներական

հիւանդութիւնների

Ընդունելութիւն { առաւօտ. 11—1 ժ. երեկոյեան 5—7 ժ.

Սօլոլակ, Սերգիեվսկայա 15, Փրիդոնովի տանը։

առ. (չ. ու. չ.) 6—100

Պետական Դումայի ընտրութիւնները

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ ընտրողական ցուցակների մէջ մտցնելու մասին յայտարարութեան ընդունելութիւնը կը դադարեցվի Նոյեմբերի 10-ին, երեկոյեան ժամը 8-ին։

առ. 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կարօտ ենք ազնիւ գործողների. Վերջին տեղեկութիւններ. Կուսակցութիւնների և Դաշնակցութիւնների շուրջը. Սահմանադիր-ռամկավար կուսակցութեան ազրարային մանաժողովի նիստը Մոսկվայում. Բողոքներ. Պարսից Շահի հառ. Կառավարչական շրջանակներում. Ներկայացուցչական կառավարութիւն. Բողոքին պէտք է ձայնակցել. Մի փոքրիկ ժամանակաւոր պատասխան ևս. Դաշնակցութեան սերբագործութիւնները Նախիջևանի գաւառի Գ. շրջանում. Վօսֆորի խողովից. Նամակներ խմբագրութեան. Դաշնակցութիւն Գուլլուջա գիւղում. Ներքին լուրեր. ՀԵՌՈՒԳԻՐՆԵՐ—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԵՌԸՕՐ ԵՒՋ ՈՉԻՆ ԳՈՐԾՈՂՆԵՐԻ

1

Համալսարանների և բարձրագոյն դպրոցների ուսանողութիւնը տարուբերվում է այն մեծ ծփանքի մէջ, որ ստեղծել է Ռուսաստանի իրականութիւնը։

Ուսանողութիւնը գիտէ, որ պէտք է ուսանել ապագայ արժանաւոր քաղաքացի լինելու համար։

Բայց նա գիտէ և այն, որ ազատագրական շարժումը ճգնաժամի է հանդիպել, որից յաղթական դուրս գալու համար կարող են հարկաւոր լինել մարտիկ ոյժեր։

Ուսանել և միևնոյն ժամանակ պատրաստ լինել պատմական-հասարակական օրէի պահանջների համար գործելու—ահա այն բանաձևը, որով ուսանողութիւնը կարելի է համարում իր ներկայութիւնը բարձրագոյն դպրոցների պատերում։

Եւ համալսարանական կեանքը անդրադարձնում է իր վրա ընդհանուր հոսանքների և ուսանողութեան տրամադրութեան ելևէջները։

Կանգնել ճգնաժամը և բարձրագոյն դպրոցը կը տայ մեզ պատրաստված գործողներ։

Կը սպասենք։

II

Մենք սպասում ենք մեր ուսանողներին իբրև կեանքի առաջադիմութեան ասպարէզում գործողների։

Եւ կը ցանկանայինք, որ նրանք գային մեծ թւով օգնելու մեր ժողովրդին, որ այնքան կարօտ է եռանդուն և անձնուէր գործողների։

Այժմ աւելի, քան երբ և իցէ զգալի է շտապ, ազնիւ և գիտակ գործողների պակասութիւնը մեր երկրում։ Եւ մեր ժողովուրդը, որ այնքան բարձր և իդեալացրած կարծիք ունէր իր երիտասարդութեան վրա, այժմ սկսել է հիասթափվել, շնորհիւ այն անարժան խաղերի, որ խաղացին ժողովրդի հետ երիտասարդութեան անունով վարագուրված կեղծ ու չարամիտ անձնուրոյթիւններ։

Երիտասարդութեան վարկաբեկ եղած անունը պէտք է բարձրացնել և թոյլ չը տալ, որ նա աւելի ու աւելի ընկնի հասարակական կարծիքի առաջ։

III

Իւրաքանչիւր մարդու համար թանգ է իր դաւանանքը, իր աշխարհայեացքը։

Թող իւրաքանչիւր գործող անձ բերի իր մտաւոր-բարոյական կարողութիւնը ժողովրդի համար, բայց ճանաչէ մի պայման իր համար պարտաւորական և հիմնական—այն է գալ ժողովրդի առաջ անկեղծ կերպով, որոշ ծրագրով, ազնիւ գործունէութեան եղանակով, առանց կեղծիքների, յետին նպատակների, բռնութիւնների և սպառնալիքների։

Եթէ սոցիալիստ էք, ազատամիտ էք, արմատական էք, յեղափոխական էք, հայրենասէր էք—այդպէս էլ հանդէս եկէք գործելու, մի գցէք ձեր վրա ուրիշ քղամիտներ և մի նենդէք այն գործը, որ դուք իբրև սրբութիւն դնում էք ժողովրդի առաջ։

Անկեղծութիւն և շիտակութիւն կապված լուրջ մտածողութեան հետ—ահա ինչը պակասում է մեզանում։

IV

Ոչ մի ժամանակ մարդիկ այնքան կեղծ դերեր չեն խաղացել, ինչպէս այս վերջին տարիները մեզանում։ Կեղծ-սոցիալիստութիւն, կեղծ-արմատականութիւն, կեղծ-յեղափոխականութիւն, կեղծ-հայրենասիրութիւն և ուրիշ տեսակ տեսակ փարիսեցիութիւններ և նենգութիւններ ապականեցին հասարակական գործունէութեան ասպարէզը։

Համակերպվել, անվերջ և անդադար համակերպվել, սիրամարգի փետուրներով պճնվել, օրվայ մօդային յարմարվել և անպատկառ կերպով խաղալ դաւանանքների և համոզմունքների հետ—ահա այն սարսափելի չարիքներից մէկը, որ հանդիպում է եկել մեր կեանքում և որը դուրս է իր ոաքի տակ շիտակ, անկեղծ և ազնիւ գործունէութիւնը։

V

Դաղափարների և քարոզների մաքուր պահպանելը ամենակարևոր պայմաններից մէկն է նրանց ապագայ յաղթանակի համար։

Թող մի արմատական, մի սոցիալիստ քարոզիչ այսօր ունենայ մի փոքր լսարան, վաղը նա կը գտնէ հասարակութեան աւելի մեծ խաւեր, եթէ նրա քարոզների մէջ կան կենսական և իդեական առողջ տարրեր։ Բայց եթէ նա արագ աջողութիւնների համար կը համակերպվի այս ու այն հոսանքին, կը յենվի ֆիզիքական ոյժի վրա, այն ժամանակ նրա արագ յաղթութիւնը շատ շուտով տեղի կը տայ նոյնպէս վաղահաս պարտութեան։

Մտէք կեանքի մէջ մաքուր ձեռքերով, անկեղծ զգացմունքներով, համոզված խօսքով և դուք ամուր կերպով կը նուաճէք տարածքներ։

Ա. Բալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Նոյեմբերի 8-ին, երեկոյեան ժամի 5-ին մահափորձ է կատարվել գեներալ Թօլօչանովի կեանքի դէմ։ Դէպքը տեղի է ունեցել հետևեալ պայմաններում։ Գեներալը Օրբէլիանովի բաղնիսում լուացվելուց յետոյ, բուրկայում փաթաթված, նստում է կառք և անցնում թուրքական մէյդանով։ Երբ մէյդանից պտտում է դէպի վեր բարձրանալ, յանկարծ մի չարագործ թռչում է կառքի վրա և սաբրճանակի գնդակի երկու հարուածով ծանր կերպով վիրաւորում գենեռալին, որից վերջինս ընկնում է անգիտ։ Իսկ չարագործը փախչում—անյայտանում է։ Մի գնդակը կպել է գեներալը ոտքը։ Հրաւորները տեղափոխել են խակոյն Միքայէլեան հիւանդանոցը անգիտ վիճակում։ Երէկ առաւօտեան միայն ուշքի է եկել վիրաւորը և բացատրել, որ չարագործը եղել է դիմակաւորված. հագին ունեցել է սպիտակ պէշակ և մորթէ մեծ գլխարկը գլխին։ Դնդակը արդէն հանել են վէրքից, և բժիշկները գտնում են, որ հիւանդի դրութիւնը վերին աստիճանի լուրջ է և եթէ հնարաւոր լինի բարդութիւնների առաջն առնել, կարելի է վիրաւորի կեանքը փրկել։ Երէկ ժամի 10-ին Կովկասեան Փոխարքան այցելել է վիրաւորին։

—

Դանձակից նոյեմբերի 8-ի գիշերը «Т. Л.» լրագիրը ստացել է հետևեալ հեռագիրը.

«Ցերեկվայ ժամը 3-ին, այսօր, նոյեմբերի 8-ին ոստիկանական վարչութեան մէջ հրդեհ առաջացաւ։ Կրակը ուժեղ է։ Այլևեց արլիվը գործերով»։

—

Կարսի շրջանի զինուորական նահանգապետը նոյեմբերի 5-ից հեռագրում է Կովկասի Փոխարքային գեներալ-ադիւտանտ.

«Հոկտ. 31-ի գիշերը զինված քիւրդեր յարձակվել են Կարսից Նախիջևանի գաւառը գնացող եղեգների և հայերի վրա, վրէժխնդրութիւնից սպանել են 6 եղեգիների և երկու հայերի։ Եղեգների վիճակի կասկածների տանուտէր Թօսամանբէկօվը, որ կասկածվում է եղեգիներից այդ սպանութիւնը կատարող աւազակախումբը կազմակերպելու մէջ, փախել է Դիգօրի գիւղը։ Հինգ հարիւր եղեգի, շրջապատելով Դիգօր գիւղը, պահանջում են անյապաղ յանձնել տանուտէրին. թերևս արիւնահեղ ընդհարում տեղի ունենայ եղեգիների և քրդերի միջև»։

Երէկ, առաւօտեան ժամի 9-ին երկաթուղու գնացքների կառավարիչ ինժեներ Աղօլի Էդուարդովիչ Բերնդսը մի ուրիշ ինժեների հետ միասին, լեզգի պահապանի ուղեկցութեամբ, երբ գնալիս է լինում պաշտօնավարութեան, Աղզաշայա փողոցների անկիւնում յանկարծ երեք չարագործներ յարձակվում են նրանց վրա և տարճանակի գնդակներով վիրաւորում ինժեներ Աղօլին, ապա մի գնդակով էլ վիրաւորում են պահապանին՝ ոտից։ Վերջինս չէ կորցնում իրան և ինքն էլ սկսում է պատասխանել իր տարճանակով, որի միջոցին սպանվում է չարագործներից մէկը, իսկ երկուսը փախչում են։ Օգնութեան հասնող զինուոր պահակներն ու ոստիկանները սկսում են հրացանաձգութեամբ հետամուտ լինել չարագործներին և բռնում են մէկին։ Բռնվածը իրան անուանել է Սակվարելիձէ։ Սպանվածի անձնաւորութիւնը դեռ ևս պարզված չէ։ Ինչպէս երևում է, չարագործները եղել են իժէրներ։ Վիրաւորված ինժեներին փոխադրել են երկաթուղային հիւանդանոցը։ Բժիշկները գտել են, որ նրա դրութիւնը վտանգաւոր է։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

—

—Խաղաղ վերանորոգութեան կուսակցութեան կենտրոնական կոմիտեան նոյեմբերի 1-ին կայացած նիստում պարզվել է, որ կուսակցութիւնը ներկայումս գաւառներում ունի 25 բաժանմունքներ, որոնց թւում և Օդեսայում և Ռիգայում։ Երկար վիճաբանութեան նիւթ է ծառայել այն հարցը, թէ իրաւունք ունեն, արդեօք, խաղաղ վերանորոգութեան կուսակցութեան անդամները միևնոյն ժամանակ պատկանել և ուրիշ կուսակցութիւնների կամ դաշնակցութիւնների։ Այդ հարցը լուրջ և տաք վիճաբանութիւնների պատճառ է դարձել, որովհետև խաղաղ վերանորոգութեան անդամներից շատերը, ինչպէս օրինակ. Մ. Սամսօվիչը, միաժամանակ անդամ են թէ խաղաղ վերանորոգութեան և թէ հոկտեմբերի 17-ի միութեան։ Պետական կոմիտեաը որոշել է, որ խաղաղ վերանորոգութեան կուսակցութեան անդամները ոչ մի դէպքում չեն կարող անդամ լինել ուրիշ կուսակցութիւնների և միութիւնների։

—Հոկտեմբերի 17-ի միութիւնը Պետերբուրգում, Ազնուականութեան դահլիճում, շուտով կայացնելու է առաջին նախնական ժողովը, որտեղ Ա. Գուչկովը պէտք է կարդայ մի զեկույցի մասին։ («Нов. Вр.»)

—Ինչպէս պարզվել է արդէն, Մոսկվայում ամառը ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը գումարել է 62 շրջանային ժողովներ։

Նոյն կուսակցութեան Մոսկվայի կոմիտէին կից հիմնված ագիտացիոներ կազմակերպող բիւրօն վճռել է առանձին ուշադրութիւն դարձնել գաւառների վրա։ Այդ նպատակով նա ընտրել է 14 հոգի իբրև ագիտատորներ, որոնց թւում դանվում է և պրոֆեսսոր Կիզվետտերը։

Նոյեմբերի 1-ին կուսակցութեան կենտրոնական ակումբի դահլիճում տեղի է ունեցել կուսակցութեան Եռաշրջանի ժողովը։ Վ. Եակուշկինը զեկուցել է սահմանադիր-ռամկավարների ագրարային ծրագրի մասին, յաջորդաբար տուել է նրա ամբողջ պատմութիւնը՝ սկսելով նրա ծագման օրից։ Այդ հարցը ծնունդ է առել սահմանադրական-ռամկավարների մի փոքրիկ շրջանում դեռ ևս կուսակցութեան ծագումից առաջ։ Զեկուցողին վարձատրել են բուռն ծափահարութիւններով։ Ժողովին ներկայ է եղել ոստիկանութեան ներկայացուցիչը։

Հոկտեմբերի 28-ին Սախարովի նախագահութեամբ կայացել է Պրէչիստենսկի շրջանի ժողովը։ Զեկուցումն է տուել Պետական Դումայի նշանակութեան մասին Ս. Կօտլարեվսկին։ Զեկուցողը այն միտքն է արտայայտել, որ Դումայի արձակման պատճառը այն է, որ հասարակական ոյժերը բոլորովին կազմակերպված չեն եղել։ Կուսակցութիւնների նպատակն է ներկայումս կազմակերպել հասարակական ոյժերը այնպէս, որ այլևս հնարաւոր չը լինի այնքան հեշտ կերպով արձակել Պետական Դուման, ինչպէս որ եղաւ առաջին հետ։

ՍԱՄԱՐԱՆԱԴԻՐ-ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

—

Մոսկվայում, հոկտ. 29-ին, կայացել է սահմանադիր-ռամկավար կուսակցութեան ագրարային մասնաճողովի նիստը, որին մասնակցել են Ա. Ա. Մուխանովը (նախագահ), իշխ. Պեսոր Դ. Թալգօրուկովը, Վ. Ե. Եակուշկինը, իշխ. Դ. Ի. Շախովսկին, Ա. Ա. Կաուֆմանը, Ա. Ա. Մանուիլովը, Ն. Ն. Զերնէչկովը և գաւառներից եկած մի քանի ներկայացուցիչներ։ Ինչուութեան է ներկայացրվել այն հարցը, թէ նախ քան 2-րդ Պետական Դուման գումարվելը, մասնաճողովը ինչ է անելու և կուսի ինչ եղանակ է ունենալու։ Կենտրոնական կոմիտեաը կարծիք է յայտնել, թէ մինչև այդ ժամանակ անհրաժեշտ է կազմել հողային բարենորոգման աւելի մանրամասն օրինագիծ, որ և գլուխ է հանելու ագրարային մասնաճողովը։ Ընդհանուր առմամբ ուրուագծվում է այսպիսի ծրագիր. 1) օրինագծի հիմնական կէտերի տեսական մշակումն այս բոլոր հարցերի վերաբերմամբ, որոնք կազմում են կուսակցութեան ագրարային ծրագիրը և որոնք մտել են 42-րդ գլուխեան մէջ և ուրուագծվում են դումայական նախկին ագրար մասնաճողովից, 2) գործնական մշակումն շրջանային համագումարներում կամ խորհրդակցութիւններում քննվող վիճելի հարցերի լուսաբանման օգնութեամբ և 3) փաստական, վիճակագրական և այլ նիւթի պատրաստումն՝ օրինագծի հիմնական կէտերի պատճառաբանութեան և հիմնաւորութեան համար։

Առաջին բաժնի մէջ մուծված աշխատանքը վերաբերում է մի շարք առանձին հարցերին, որոնք հէնց մասնաճողովն նիստում ստորաբաժանվում են՝ առանձին խմբակների և անձերի միջև մշակելու համար։ Այսպէս օրինակ, մասնաճողովի Մոսկվայի անդամները Ա. Ա. Մանուիլովի գեկավարութեամբ իրանց վրա են վերցնում կապալի, բաժանման հիմունքների և միջոցների և դէպի բաժանելի հողը բռնելիք վերաբերմունքի հարցերը մշակելու հոգը և այլն։ Պետերբուրգում ապրող անդամներին յանձնարարվում է գործի, ֆինանսական կողմի, հողի բաժանման նորմաների, անձեռնմխելի հողի մակսիմում նորմաների հարցերի մշակման պարտականութիւնը։

Այն կասկածելի մանաւորութիւնների մօտակայ լուսաբանութիւնը, որոնց վերաբերմամբ թերևս կարելի կը լինի հեռանալ ընդհանուր ծրագրից, վճռված է անել մի շարք շրջանային կամ բայօնական խորհրդակցութիւններ որոնց կազմակերպելը իր վրա է վերցրել սահմանադրական-ռամկավար կուսակցութիւնը, և այդպիսի մի խորհրդակցութիւն արդէն իրականացման մօտ է։ Մշակվում է գործի տեխնիկական կողմը (ում հրաւիրել, ինչ սկզբունքով և այլն) և ընդգծվում է այդպիսի խորհրդակցութեան ժամանակ քննութեան ենթարկելի հարցերի ծրագիրը (դեռ վերջում)։

Ստատիստիկական և այլ նիւթի պատրաստութիւնը յանձնվում է մասնաժողովի կարգադրիչ կոմիտէին, որը գտնվելու է Պետերբուրգում։ Ընդ սմին ծայրագաւառային հողատիրութեան վերաբերեալ հարցերը մշակելու համար մտադրվում է հրաւիրել մասնագէտներ—կուսակցութեան պատկանողներից անկախ։ Այստեղ նկատի ունեն նիւթերը ստորաբաժանելու ըստ բայօնների։

Բացի դրանից, աչքի առաջ կայ, որ հէնց իրանք, շրջանային ժողովները կը տան նոր ինչպէս և խթան կը ծառայեն՝ մշակել տալու այդ հարցերը ագրարային հարցին տեղեակ տարբեր անձերի ձեռքով։

Ընդհանրապէս, այդ ծրագիրը ընդունվել է մասնաժողովից և լրացվել է մի ցանկութեամբ, որպէսզի տեսական մշակումը արտայայտվէր օրինագծի հիմնական կէտերի ձևով, և, բացի դրանից, պատրաստվեն հողային ժամանակաւոր օրէնքներ անցողական այն ժամանակի համար, և այն նպատակով, որ Պ. Ս. Սոլիպինի կարգադրի հրատարակած օրէնքների գործողութիւնները դադարեցվեն մօտերս։ Ցանկութիւն է յայտնվում, որ անյապաղ ձեռնարկվի նախկին դումայական ագրարային մասնաժողովի արձանագրութիւնների հրատարակմանը։ Ժողովում յարուցվեց նաև մի յատուկ ժողովածու հրատարակելու հարցը «Ագրարային հարցը» վերնագրով, սակայն վերջինս լուծումը յետաձգվեց ագրա-

[illegible]

տոյ դումայի հետևեալ նիստին։ Յետաձգվեց դարձեալ և մի ուրիշ հարց, թէ՝ ինչ է լինելու ապագայ հողային օրինագծի բնաւորութիւնը այն դերի նկատմամբ, որ պէտք է տրվի նրա մէջ՝ տեղական ագրարային օրգանների այնպիսի ծայրերկրի համար, ինչպիսին է, օրինակ, Մալօրոսիան և այլն։

Ագրարային մասնաժողովի ընդունած ընդհանուր որոշումը կարելի է ձևակերպել այսպէս.

1) Ընդունել բիւրօի ուրուագծած աշխատանքների ընդհանուր ծրագիրը։

2) Ագրարային օրինագծի հիմնական կէտերը մշակել Պետական Դումայի փետրվարեան նստաշրջանի մօտերքը։

3) Ցանձնարարել բիւրօյին որոշել, ինչ հարցեր մտցնել այդ օրինագծում վերջնական խմբագրութեամբ։

ԲՈՂՈՔՆԵՐ

—

Յայտնում եմ իմ վիշտս Սուքիաս արքեպիսկոպոս Պարգեանի դէմ գործված բռնութեան առիթով, որովհետև նրա մարդկային արժանապատուութիւնը այնպէս վայրենի կերպով անարգվեց ոգէտ խուժանի կողմից, և իմ բուռն զայրոյթս այն խուժանապետներին, որոնք ընդունակ են բորբոքիլու ժողովրդի լոկ անասնական հակումները և շահագործելու նրա անունը իրանց սուր նպատակներին հասնելու համար։ Միացնում եմ իմ ձայնս և պահանջում, որ այդ ոգով իրողութիւնը քննվի և պարզվի հասարակութիւնից ընտրված դատաւորների ձեռքով։

Յ. Շահնազարեան

—

Բագու, Նոյեմբերի 7-ին

Անսահման զայրոյթով կարդացինք այն քամեալի բռնութեան մասին, որը գործ է դրվել Եչմիածնում Սուքիաս արքեպիսկոպոսի վրա։ Ցայտնում ենք մեր խորին զղջանքը և նողկանքը բռնութիւն կազմակերպողներին և նրա գործիք՝ կոյր, ոչխարացած խուժանին։

Պահանջում ենք ժողովրդական հեղինակաւոր դատաստան, որ կարողանայ օր առաջ մաքրել ասպարէզը մեր կեանքը արատաւորող խուժանի ճանկերից։ Միանում ենք մի խումբ ընդոգողներին։

Յ. Ղազանչեան, Գ. Բատիկեան, Մ. Յակոբեան, Ա. Տէր-Յարութիւնեան, Ա. Ազիզեան, Ա. Ղլայեան, Վ. Կարապետեան, Ի. Սափարեան։

—

Բագու, Նոյեմբերի 5-ին

Այսօր Մարդասիրական Ընկերութեան դահլիճում ժողով կայացաւ և 211 հոգու ստորագրութեամբ հետևեալ հեռագիրն ուղարկվեց Եչմիածին.

«Արտայայտում ենք մեր խորին զայրոյթը այն անձանց, որոնք վայրենի բռնութիւն գործ դրին ծերունի արքեպիսկոպոս Սուքիասի վրա»։

ՊԱՐՍԻՑ ՇԱՀԻ ՃԱՌԸ

—

Մայրաքաղաքների լրագիրներում տպված է պարսից Շահի ճառը, որ նա արտասանել է պարսկական Ազգային Ժողովի (Մէջլիս) բացման առիթով։ Ահա այդ ճառը.

«Փառք Աստուծոյ։ Տարիներ շարունակ մեր փայփայած իղձը այսօր, Աստուծոյ ողորմածութեամբ, իրականութիւն է դառնում գործով և դրանով մենք հասնում ենք մեր նպատակին։ Որքան բախտաւոր եմ ես այսօր, երբ զուգադիպում է Ազգային Մէջլիսի բացման հանդէսը, այն Մէջլիսի, որը է մի կը միացնէ պետութեան և երկրի բոլոր մասերը, կուռ և մերձ կապերով կը միացնէ և կամրապնդէ պետութիւնը ժողովրդի հետ, համայն ժողովրդի կարիքների, մտքերի և հայեացքների արտայայտիչը կը դառնայ և, վերջապէս, մեր համերաշխութեան և արդարադատութեան պահպան կը հանդիսանայ— Ամենաբարձրեալի կամքով մեզ հպատակ ազգերի վերաբերմամբ։ Այսօրվայ օրը հպատակութիւն, արդարադատութիւն և միութիւն կուեղծնէ պետութեան և ժողովրդի միջև, պետական և ժողովրդական գործերի հիմունքները մի ամուր ձևի մէջ կը պարփակէ, և մենք խորապէս համոզված ենք, որ ժողովրդի պատուաւոր ներկայացուցիչները— պետական մարդիկ, արտօնեալ անձինք, վաճառականները և միացեալ մեր հպատակները կը լարեն իրանց բոլոր ջանքերը և ոյժերը՝ իրականացնելու սրբազան շարիաթի կանոնները և վերակազմելու պետութեան բոլոր մասերը և մշակելու անհրաժեշտ միջոցներ՝ մեր հայրենիքի բոլոր խաների բարեկեցութեան, բարօրութեան և հանգստութեան համար, և ընդհանրապէս, բացի պետութեան, ժողովրդի և երկրի շահերից նրանց չի զբաղեցնի և ոչ մի բան։ Ի հարկէ, դուք գիտէք, որ սրբազան հիմնական նպատակները ինաչ չը պէտք է խանեն անձնական ենթադրութիւնների և շահերի հետ և հակացվեն իրրև շահադիտական նպատակներ։ Այսուհետև ժողովրդի ներկայացուցիչներից է կախված՝ կազմակերպել և համապատասխանեցնել ձեր գործողութիւնները և վճռները—ժողովրդի և պետութեան ցանկութիւնների և ձգտումների հետ։ Պարզ է ուրեմն, որ միակ օրէնքով ընտրեալներից իւրաքանչիւրը ընտրված է կերպանց գիտութեան և բարոյական յատկութիւնների պատճառով, և այդ հանգամանքը ստիպում է ձեզ դէպի ինքներդ վերաբերվել—լիակատարապէս գիտակցելով, որ լիակատար հաւատացմամբ, գիտութեամբ, հեղինակութեամբ և անկողմնապահութեամբ կառաջնորդուք ձեր սրբազան ուղիով և ձեր պարտականութիւնները կը կատարեք ճշգրիտ պատուով և անկիղծութեամբ։ Եւ որովհետև մենք սիրում ենք մեր բոլոր հպատակներին իրրև մեր որդոց, նրանց բախտաւորութիւնը և դժբախտութիւնը մեր դժբախտութիւնն և բախտաւորութիւնն ենք համարում, և միասին ենք տանում ուրախութիւն և վիշտ, աղքատութիւն և բաւականութիւն, ուստի և հարկաւոր ենք համարում նախազգուշացնել ձեզ, որ մինչև օրս ձեր գործողութիւնները և ձեռնարկութիւնները վերաբերում և միացած էին սոսկ ձեր սեփական շահերի հետ, բայց սրանից յետոյ արդէն ձեր գործողութիւնների հետևանքը վերաբերի հազարաւոր մարդկանց շահերին, որոնք ձեզ ընտրեցին և որոնք յոյս ունեն, որ սուրբ անկեղծութեամբ դուք կը ծառայէք ձեր հայրենիքին և ժողովրդին և կը խուսափէք այնպիսի գործողութիւններից և վարմունքներից, որոնք կարող են թերևս թշնամութեան և չարութեան պատճառ ծառայել։ Այդ իսկ նպատակով դուք պարտաւոր էք գործել այնպէս, որ պատասխանատու չը լինէք Աստուծոյ առաջ, չը մոռանաք մեր առած խորհուրդները և ոչ մի բսպէ անշարժ չը մնաք ձեր պարտաւորութիւնների մէջ։ Գիտցէք, որ Ամենաբարձրեալը կը հսկէ ձեր գործողութիւնները և Նա է, որ պաշտպանում է արդարութիւնը և անարդարութիւնը։ Եւ թող Ամենաբարձրեալ Ստեղծողի ձեռքը ձեր ուղեկիցը լինի, և կատարեցէք ձեր պարտականութիւնները անկիղծօրէն և պատուով, յուսալով և յենվելով Աստուծոյ ողորմածութեան և իմաստութեանը, և թող մեր ուշադրութիւնը դէպի ձեզ լինի մշտապէս»։

ԿԱՌԱՎԱՐԶԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

—

Հոկտեմբերի 31-ին կայացել է Պետերբուրգի կառավարչական բարձրաստիճան անձանց երկրորդ նիստը, խորհրդակցելու այն հարցի մասին, թէ ինչ դիրք բռնել Պետական Դումայի և կառավարութեան գործունէութեան ծրագրի վերաբերմամբ։

Նիստին մասնակցողների մեծ մասը զբաղված է եղել հիմնական օրէնքների վերաբերեալ հարցերով։ Դեռևս նիստի սկզբում ոմանք այն կարծիքն են յայտնել, որ հիմնական օրէնքները կարող են պատճառ դառնալ Դումայի և կառավարութեան յարաբերութիւնները լարվելուն։ Մասնակցողների մեծամասնութիւնը այն կարծիքն է յայտնել, որ հիմնական օրէնքները խմբագրված են անհրաժեշտակայարմար ձևով։ այդ բացատրվում է մասամբ նրանով, որ կազմված են հարմեալ կերպով, նոյնպէս և նրանով, որ նրանց կազմելու ժամանակ չեն մասնակցել այն մասնագէտներից շատերը, որոնք սովորաբար մասնակցում են օրէնսդրական ակտեր կազմելիս։ Ներկայ եղողները համաձայնվել են նոյնպէս որ այդ օրէնքների կէտերից մի քանիսը չափազանց մութն են, իսկ մի քանիսն էլ՝ չափազանց անբաւարար։ այդ պատճառով էլ տրտունջներ կան հիմնական օրէնքների դէմ։

Միևնոյն ժամանակ յայտնել են այն, որ հիմնական օրէնքները, լինելով պետական կազմի համար կարդինալ հարց, պահանջում են չափազանց զգոյշ վերաբերմունք իրանց նկատմամբ, և այդ պատճառով տալ ամբողջապէս Պետական Դումայի ձեռքը նրանց նոր խմբագրութեամբ մշակելու—անկարելի է։

Իբրև զիջողութիւն արվել է հետևեալ առաջարկութիւնը. մշակել հիմնական օրէնքների նոր նախագիծ, ամբողջապէս պահպանելով անփոփոխ այն կէտերի խմբագրութիւնը, որտեղ յիշված են Բարձրագոյն իշխանութեան էութեան մասին, և, Բարձրագոյն նախաձեռնութեամբ, ներկայացնել այդ նախագիծը Դումայի քննութեանը։ Այդ նոր նախագծի մէջ մտադրութիւն կայ յիշել, որ ապագայում Դումային է վերապահված հիմնական օրէնքները բարեփոխելու նախաձեռնութիւնը, այն սահմանափակումով սակայն, որ Բարձրագոյն իշխանութեան վերաբերող կէտերը Դումայի իրաւասութիւնից անպայման դուրս մնան, որովհետև այդ կէտերի փոփոխութեան հարցի քննութիւնը ամբողջովին Բարձրագոյն իշխանութեանն է պատկանում և Դումայի գործունէութեան շրջանակներից դուրս է։ Այդ կէտերը պէտք է ճիշտ կերպով յիշված լինեն նոր նախագծի մէջ։

Մօտ օրերս բարձր շրջաններում յայտած առաջարկութիւնը՝ Դումայի ապագայ պատգամաւորներին կառավարչական կոչ ուղղելու մասին, նիստում համակրանքով է ընդունվել։ Ըստ որում ներկայ եղողները այն միտքն են յայտնել, որ այդ կոչը, եթէ որ հարցը մեկնելու է գրական մտքով, պէտք է կազմված լինի խաղաղասիրական մտքով, պահպանելով այն կօրենկոմութիւնը, որը, առհասարակ, հարկաւոր է պահպանել Դումայի նկատմամբ, իբրև ժողովրդական ներկայացուցչական մի մարմին։

Ոմանք մատնանշել են այն բանը, որ գօրամիկնեան գեկլարացիաների սպառնական ձևը բաւականաչափ լարեց Դումայի և կառավարութեան փոխադարձ յարաբերութիւնները, և այն էլ մի այնպիսի մօմենտում, երբ, բարձրաստիճան ճառախօսների կարծիքով, Դումայում կրքերը մասամբ թուլացել էին, և որոշ ատիճանի տակա պահպանելով հնարաւոր կը լինէր «վատթար հաշտութիւն» կայացնել, որը յամենայն դէպս աւելի լաւ է քան բարի կռիւը։

Պահպանելով հանդերձ կօրրեկտութիւն և բարեացակամութիւն այդ կոչի մէջ, մասնակցողներից ուրիշների կարծիքով՝ կաթեգօրիկ կերպով յիշված պէտք է լինի, որ Դուման ամենևին իրաւունք չունի դուրս գալու օրէնքով իրան վերապահված շրջանակներից։

Ընդհանուր առմամբ, այդ նիստ մասին տեղի ունեցող խօսակցութիւններից պարզ կերպով նկատվում է մի ընորոշ հանգամանք։ Ջերմ ու հաստատուն ցանկութիւն է յայտնվում հնարաւորութեան չափ երկար ժամանակ պահել Դուման և այդ նպատակով նրանք պատրաստ են նոյն իսկ զիջումներ էլ անելու, միայն թէ յայտնի, նախապէս որոշված սահմաններում։

Ինչ վերաբերում է այն հարցին, թէ ինչպէս վերաբերվել դէպ՝ կառավարութիւնը, այդ [illegible] բրանց [illegible] ատկ տանել նրան։ Նրա ամեն մի նախաձիգը՝ բարձր շրջանների հաւանութիւնը ստանալուց յետոյ միայն կը ներկայացվի Դումային։

Այդ ոգիով մատնանշվել է և այն հանգամանքը, որ այդ միջոցը, ապահովելով քաղաքականութեան որոշ ուղղութիւնը յաջանակի փոփոխութեան ենթարկվող կաբինետների ազդեցութիւնից, միևնոյն ժամանակ կուսեհնայ և մի ուրիշ աւելի կարևոր նշանակութիւն։ նախագծերի նախապէս քննելը կը նպաստէ Դումայի ու Բարձրագոյն իշխանութեան մէջ հնարաւոր համաձայնութեան վերանալուն, որովհետև նրանք արդէն որոշում են թէ որ նախագիծը ընդունելի է, որը՝ ոչ։

(«Н. П.»)

ԲՈՂՈՔԻՆ ՊԼԵՔ ԵՒ ՕՐԱՏՈՒԱԾ

—

«Մշակի» կիրակի օրվայ համարում ապացուցված է Թիֆլիսի հայ հասարակութեան մի քանի անդամների բողոքը էջմիածնում կատարված անլուր բռնութեան մասին, որ տեղի է ունեցել մի ծերունի հայ արքեպիսկոպոսի դէմ։ Բողոքողները իրաւացի լրջութեամբ հրաւիրում են ճանաչելու իրանց, որ մի հասարակական քննութիւն կատարվի այս մասին։ «Մշակի» № 243-րդ համարում էլ մի մանրամասն թղթակցութիւն կայ այդ քսմնիչի իրողութեան մասին։ Բանից դուրս է գալիս, որ մարդիկ, որոնք երկար տարիներ իրանց ապատամիտ են ցոյց տուել՝ իրանք իրեք կողմնակից են անսահման կամայականութեան։ Գործը նրանից է ծագել, որ չը նայելով կաթողիկոսի տուած կոնդակի զօրութեան, որի հիման վրա Վեհափառի դիւանից ոչ մի թուղթ չը պիտի դուրս գնար առանց հաստատված դիւանական խորհրդի գիտութեան՝ Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանը ինքը իրան սինոդի անդամ է առաջարկել տուել գաղտագողի կերպով։ Այդ մարդիկ զլուխ էին պատռում համգամարի ժամանակ և բղաւում թէ իրանք ընտրողական սկզբունքների ջատագովներ են, իսկ երբ որ որոշված էր, որ էջմիածնի միաբանութիւնը պիտի կանդիդատներ առաջարկէ բոլոր պաշտօնների համար, ազատամիտ վարդապետները շտապում են ընտրողական սկզբունքի ջաղ պաշտօններ ստանալ։ Այո, մի չափ, մի կշիռ է հարկաւոր բոլոր մարդկանց և բոլոր վարմունքների համար, որպէս ասում է «Երկիրը»։ Դէ համեցէք միևնոյն կշռով չափենք հետևեալ իրողութիւնները։

Էջմիածնի միաբանութիւնը որոշում է և կաթողիկոսը հաստատում է, որ բոլոր պաշտօնները ընտրվին լինեն և դիւանը խորհրդակցութեամբ վարէ գործերը, և այս վճռից յետոյ ինքը դիւանապետը, Մեսրոպ վարդապետը և Մխիթարը առաջարկվում են սինոդի անդամ հակառակ հաստատված վճռի, իսկ երբ որ Սուքիաս արքեպիսկոպոսը և կարապետ վարդապետը բողոքում են այսպիսի խայտառակութեան դէմ, մարդիկ խուժանի միջոցով աւազակային բռնութիւն են գործ դնում եպիսկոպոսի վերաբերմամբ, Կաթողիկոսի իրաւունքների խախտում են տեսնում։ Զէ՞ որ դուք ինքներդ ընտրողական սկզբունք էիք բրաւում։ Ուրեմն երբ որ գաղտագողի կերպով, հակառակ ընտրողական սկզբունքի մի որևէ ինտրիգն պիտի պաշտօն ստանայ, այդ կարելի է, իսկ երբ որ ընտրութեամբ և կաթողիկոսի հաստատութեամբ պ. Լ. Սարգսեանը տեսուչ է դառնում՝ այդ չէ կարելի։ Մենք կարդացել ենք և գիտենք որ հայոց եպիսկոպոսները պարսից խաներից են ենթարկվել հայոյանքի և գանակոծութեան, բայց Հայաստան ապատող մի կուսակցութիւն դուրս գայ և պաշտպանէ վայրենի և չը լսված մի յարձակում հայ եպիսկոպոսի դէմ, որպէս ասում է կիրակի օրվայ «Երկիր» լրագրի առաջնորդողը՝ սա նոր տեսակի գաղտիարական գործունէութիւն է։ Այո, պէտք է բողոքել, ինչ գնով էլ կարելի լինի, ապատվելու մեր շուրջը տիրող բռնութիւնից, և օյժ գործ դնողների դէմ միշտ ատեղոյ հասարակութիւնը իրաւունք ունի ոյժի դիմելու և օրէնաւոր պաշտպանութիւն խնդրելու աւազակների դէմ։

Ընթերցող

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

V

Միապետական եւ պարլամենտական սոսիալիտիզմ

—

Արդիւնաբերութիւնը կապիտալիստական եղանակով կատարելու ժամանակ, որ սկսվում է զարգանալ 16-դ դարում, ապրանքներ պատրաստելն ու վաճառքի համար արդիւնաբերելը մի ընդհանուր ձև է դառնում արդիւնաբերութեան համար։ Դրա հետ միաժամանակ հետզհետէ անհետանում է մասնաւոր ձեռնարկութիւնը՝ հենց իրանց արդիւնաբերողների ու նրանց աղաների, եթէ այդպիսիները կան, սպառելու համար արդիւնաբերելը։ Այդ ժամանակներում զիւղական և քաղաքային համայնքները այլ ևս անկարող են լինում իրանց առանձնացած դիրքը պահպանել, և իրանք իրանց պէտքերը հոգալու հնարաւորութիւնից զրկվում են։ Արդիւնագործութեան առանձին ճիւղերը այդ ժամանակ արդէն կախումն են ունենում ներքին շուկայից, իսկ յաճախ այս վերջինի միջոցով կամ ուղղակի անմիջական կերպով և համաշխարհային շուկայից։

Բայց ներքին շուկայ ասելով, պէտք է հասկանալ այն ամբողջ տերրիտորիան, որի վրա տարածված է այս կամ այն պետութիւնը։ Պետութիւնը իր տերրիտորիայի սահմանների մէջ, հնարաւոր եղածին չափ, պաշտպանում է իր արդիւնաբերողներին ու վաճառականներին օտար արդիւնաբերողների ու վաճառականների մրցումից։ Նա նոյնպէս հոգ է տանում, որ իր երկրի ապրանքները նպաստաւոր կերպ վ վաճառվեն արտասահմանեան շուկաներում։ Որչափ մեծ լինի պետութիւնը, որչափ զօրաւոր լինի իշխանութիւնը, նոյնչափ աւելի արդիւնաբերողներն ու վաճառականները կարող են յոյս ունենալ, թէ իրանց շահերը լաւ կը պաշտպանվեն։

Այդ ժամանակներից պետութիւնները ամբողջ մնտեսական հիմք են ստանում։ Միջին դարերում, նուաճումների, ժառանգական բաժանումների և փոխանակութեան, մինչև իսկ գրաւ դնելու*) շնորհիւ զանազան թագաւորող տների կալուածների սահմանները շարունակաբար փոփոխութիւնների էին ենթարկվում։ Որովհետև ամեն մի համայնք, կամ, գնել, ամեն մի շրջան իրանից մի առանձին ամբողջութիւն էր ներկայացնում, ուստի բոլորովին կարիք չէր զգացվում, որ միևնոյն թագաւորի գանաձները կալուածները միմեանց կպած լինէին։

Այսպէս օրինակ, Հաբսբուրգները 14 դարում կալուածներ ունէին ոչ միայն. այժմեան գերմանո-աւստրիական շրջաններում, այլև Շվեյցարիայում, Շվաբիայում և Էլզասում։

Այնինչ այժմեան պետութիւնները, ընդհակառակը, իրանցից մնտեսապէս ամուր կերպով կապված շրջաններ են ներկայացնում, որոնք այնչափ աւելի միաձուլ են դառնում, որչափ աւելի երկար գոյութիւն ունի պետութիւնը, որչափ աւելի մնտեսական կնոջը սրա սահմանորում զարգացել է և որչափ աւելի է արդիւնաբերութիւնը հասապատասխան դառնում իր արագադրութեան տակ գտնված ներքին շուկայի պահանջներին։ Այդ պարագայում պետութեան սահմանները ընդարձակելու հոգը այլևս դադարում է միմիայն զինուորական կաստայից դուրս եկած թագաւորական տան գործը լինել։ Արդիւնաբերող դասակարգերն են այլևս այդ բանի մէջ շահագրգռված։ Այդ ժամանակ պետութիւնը դինաստիականից դառնում է ազգային։

Գիւղական և քաղաքային համայնքների ընակիչներին միջին դարերի վերջում այն հարցը, թէ արդեօք իրանց թագաւորը ուրիշ հողեր էլ ունի՞, նոյնչափ չէր հետաքրքրում, որչափ հիմա մի որևէ հողատէր ազնուականի բանուորներին չէ հետաքրքրում, թէ արդեօք սա ուրիշ կալուածներ էլ ունի։ Իսկ ժամանակակից պետութեան բնակիչների համար, ընդհանրապէս, պետութեան սահմանների ամեն մի փոքրանալը արդէն մի կորուստ է համարվում նրանց մնտեսական կնոջ՝ զարգացման համար, մինչդեռ պետութեան սահմանների ընդարձակումը նրանց համար ներքին շուկայի ընդարձակումն ու համաշխարհային շուկայում լաւ պայմաններ ձեռք բերել է նշանակ։ սի։

Որչափ աւելի ամուր կապերով է կապված և աւելի զօրաւոր է նոր պետական օրգանիզմը, նոյնչափ աւելի շուտ են քայքայվում նրա մէջ մնացած հին քաղաքական ու սոցիալական կազմակերպութիւնները։

Այս վերջինների կատարած պաշտօնները մէկը միւսի հետևից անցնում են պետութեան ձեռքը և այդ կազմակերպութիւնները այլևս մի մի ատերակներ են հանդիսանում, որոնք խանգարում են յետագայ զարգացման ճանապարհը, ուստի և նրանց իսպառ ոչնչացնելը անհրաժեշտութիւն է դառնում։ Հասարակութիւնը «ատօմանալու»՝ այսինքն պետութեան մէջ հնացած կազմակերպութիւնների քայքայման հետ միաժամանակ կատարվում է պետութեան և հասարակութեան կենտրօնացումը։

Առևտրականութիւնը հին ժամանակներից արդէն կենտրօնացման տենդենցիա է ցոյց տուել։ Վաճառականութիւնը թէ ապրանքները և թէ գնողներին ու ծախողներին քաշում է որոշ այնպիսի կէտերի վրա, որոնք մասնաւորապէս աչքի են ընկնում իրանց նպաստաւոր աշխարհագրական ու քաղաքական պայմաններով։ Արդիւնաբերութիւնը կապիտալիստական եղանակով կատարվելու ժամանակ, երբ ամբողջ արդիւնաբերութիւնը ապրանք լինելու համար է պատրաստվում և ուստի նա կախումն է ստանում վաճառականութիւնից, այս վերջինի կենտրօնացումը կենտրօնացնում է և ամբողջ մնտեսական կեանքը։ Ամբողջ երկիրը, ուղղակի կամ անուղղակի կերպով, առաւել կամ նուազ չափով, մնտեսապէս կախումն է ստանում թէ զլխաւոր քաղաքից և թէ կապիտալիստների դասակարգից։ Գլխաւոր քաղաքը, վաճառականութեան այդ կենտրօնը միևնոյն ժամանակ դառնում է և յաւելեալ արժէքների, երկրի աւելացած հարստութիւնների մի կենտրօնավայր. ճոխութեանն ու շռայլութեանը յաջողվում են գնարուեսաը և գիտութիւնները։

Մնտեսական կենտրօնացմանը համապատասխանում է և քաղաքական կեանքի կենտրօնացումը. վաճառականութեան կենտրօնական վայրը դառնում է և վարչութեան կենտրօնական վայր։

Մենք արդէն ասացինք, որ նոր կազմակերպվող դասակարգերը, որոնք ապրում են ապրանքներ արտադրելով և վաճառականութեամբ, այնպիսի մի զօրաւոր իշխանութեան կարիք են զգում, որը կարողանար նրանց շահերը պաշտպանել թէ պետութեան ներսում և թէ դրսում։

Թագաւորը, վաղմի ցեղապետի այդ յաջորդը, միջին դարերում ոչ այլ ինչ էր, եթէ ոչ նոյն ցեղապետը, նոյն ցեղի զինուորական հրամանատարը, եթէ նա զինուորական կաստայի գլխաւորն էր, կամ նոյն ցեղի գլխաւոր դատաւորը, եթէ նա հոգևորական կաստայի գլխաւորն էր։ Մինչև իսկ այն ժամանակներում, երբ թագաւորի պաշտօնը արդէն ժառանգական էր դառնում,—իսկ դա բոլորովին ամեն տեղի համար չէր,—նա դարձեալ միշտ կախումն ունէր իր ինքնուրոյն ու ինքնակամ վասալների ու նոյնչափ էլ ինքնակամ և ինքնուրոյն երարխիայի բարի կամքից։ Քաղաքների զարգացումը, ինչպէս մենք արդէն տեսանք, բոլորովին չը լաւացրեց նրա դիրքը։ ընդհակառակը՝ քաղաքների զարգացման պատճառով, թագաւորը սկսեց, երկուսի փոխարէն, երեք դասերից կախումն ունենալ։

(Կը շարունակվի)

ՄԻ ՓՈՔՐԻԿ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ՊՈՏԱՍԱՆ ԵՒ

(Նամակ խմբագրութեան)

—

Ազգային փաստաբան Տ. Յովհաննիսեանը հրապարակ հանեց «Երկրի» էջերում մի փոքրիկ գօկումէնտ հաղարատեցիների ստորագրուած։ Ան դարձում էր ոչ պ. ազվօկատը կը սպասի միջնորդ դատարանի քննութեան և վճռին (միջնորդ դատարանը արդէն կազմված է), սակայն այդպէս չեղաւ. շատ գեղեցիկ տեսնենք ինչ գօկումէնտ է դա։ Իմ «Նոր Ռուսքում» գրած թղթակցութիւնից յիշաց պ. Յովհաննիսեանը ճգնում էր հարբատեցիներից կորզել մի «գօկումէնտ» իրան արդարացնող։ Իսկոյն Հաղբատ է գալիս պ. ազվօկատի ներկայացուցիչը և ձեռք է բերում հինգ հոգու ստորագրութեամբ մի թուղթ՝ զոր բոլորովին խնդրին չը վերաբերող բովանդակութեամբ։ Ես պատահմամբ գալիս եմ Հաղբատ այդ ժամանակ, կարդում եմ այդ պարոնի և ստորագրողների ներկայութեամբ իմ թղթակցութիւնը և պ. Յովհաննիսեանի պատասխանը։ Ստորագրողները յայտնում են, որ պ. Յովհաննիսեանի պ. ներկայացուցիչը այդպէս չէ բացատրել իրանց և յետ վերցնելով թուղթը պատում են։ Պ. ներկայացուցիչը յայտնում է, որ ինքը անձամբ թղթակցութիւն չէը կարդացել, որ իրան այդպէս պատմել է Յովհաննիսեանը։

Սա առաջին «գօկումէնտի» պատմութիւնն է։ Անցնենք երկրորդ «գօկումէնտին»։

Պ. Յովհաննիսեանը չէ յուսահատվում, իսկոյն Թիֆլիս է կանչում հաղբատեցի «իր» արբանեակներին՝ թուով «երեք» և խնդրում է նրանց զլուցցիներից «բերել» արդարացնող «գօկումէնտը»։ Սրանք վերադառնալով հաղբատ, կազմում են մի թուղթ, ստորագրել են տալիս գիւղացիների մի մասին և իսկոյն բերում Թիֆլիս։ Բայց 6 զարհուրանք։ Ազէնտները գտնվում են անշնորհք, թուղթը պ. Յովհաննիսեանի օգտին չէ կազմված լինում։ «Գօկումէնտը» ենթարկվում է աւտօդաֆէի։

Մաղալոն «երրորդ» «գօկումէնտի» պատմութիւնն է։

Պ. Յովհաննիսեանը տեսնելով ազէնտների անշնորհքութիւնը, ինքը կազմում է գօկումէնտ սա սեր գիւղական բարբառով։ Ազէնտները ուրանալով պահանջած գօկումէնտի սեր, սլանում են Հաղբատ ստորագրութիւններ հաւաքելու (չը մոռանամ որ սլանում է և Ալավերդի գործարանի կայտարանը և պ. Յովհ.-ը—լաւ «տարքելու» գօկումէնտը)։ Պատրաստվում է երրորդ «գօկումէնտը»։ Մի քանիսը ստորագրում են առանց կարդալու, իսկ մեծամասնութեան անունը մոմիայն ստորագրվում է ուրիշների ձեռքով և ուղարկվում պ. Յով.-ին, իսկ Յովհ.-ը առանց գիւղացիների գիտութեան հրապարակ է հանում այդ պատմական գօկումէնտը «Երկրում»։

Կոմենտարիաներն աւելորդ են։

Առ այժմս այսքան. համբերութեամբ կը սպասենք միջնորդ դատարանի վճռին։

Յ. Գ.—Մի հարց պ. Յովհաննիսեանին խնդրեմ գրէք «Երկրի» էջերում՝ ինչքան ձու, իւղ, մեղր, պանիր, գառներ և շաքարի գլուխներ էք ստացել հաղբատեցիներից։

Հաղբատեցի

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԽՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԵՐԸ ՆԱԽԻՋԵՒԱՆ ԳԱՒԱՌԻ Գ. ՇՐՋԱՆՈՒՄ

—

Հազարաւոր բռնութեան դէպքերից ես այստեղ բերում եմ միայն մի քանիսը, որ լաւ ընորոշում են Դաշնակցութեան գործունէութիւնը և ցոյց են տալիս, թէ որքան ներդաշնակութիւն կայ այդ կուսակցութեան ծրագրի, շէֆերի հոգևոր ֆրազների և յօդուածների և բուն գործունէութեան մէջ, ծրագրի իրականացման մէջ։

Անցեալ 1905 թւի ձմեռը Ռ. գիւղում տեղական խմբապետը հրամայում է մի երիտասարդի պակվել մի համգիւղացի աղջկայ հետ։ Երիտասարդը մերժում է, ասելով թէ ինքը աղքատ մարդ է և պակվելու փող չունի։ Ուզում են զօռով պակել, բայց նա փախչում է գիւղից։ Այն ժամանակ գալիս է դաշնակցական խմբապետը իր զինուորներով, կանչում է երիտասարդի մօրը, մի լաւ ծեծում է և յետոյ տանում կանդնեցնում եկեղեցու դրանը և թքում խեղճ կնոջ երեսին։

Նոյն ձմեռը Ն.-Ա. գիւղում երկու զինուոր մի գիւղացու բռնում են տանում տերէրկ տանելու, որպեզի գտնվում է այդ ժամանակ խմբապետ Ա.։ Խմբապետը հրամայում է գիւղացուն փող տալ իսկոյն։ Գիւղացին մերժում է։ Այն ժամանակ խմբապետը հրամայում զինուորներին ծեծել գիւղացուն և սկսում են ծեծել։ Այնքան ծեծում են, որ գիւղացին երկու տմիս պառկած է եղել անկողնում։

Փող պահանջելու համար մէկին գնդակով վիրաւորել են, իսկ շատերին ծեծել են։ Դա սովորական սիրաղործութիւն է համարվում «սուրբ գործի» համար։

1906 թ. հոկտեմբեր ամսին Դ. գիւղում պատահում է հետևեալ դէպքը։ Գիւղում, տեղական Դաշնակցութեան լիազօր Ն. Մ. գիշերը կանչում է իր մօտ Մ. Մ.-ին, որի հետ հին անձնական թշնամութիւն է ունեցել և մի ինչ որ յանձնարարութեամբ հրամայում է իսկոյն գնալ Տ. գիւղը։ Վերջինս ասում է, թէ չէ կարող գնալ, որովհետև իր տունը թուրքերի մօտումն է և անտէր է. սկսում է խեղճին ծեծել մարգով, հարուածներ հասցնելով գլխին։ Մի էկս ժամից յետոյ Մ. Մ. ուղղի ՝ՄաստՄից մեռնում է, թողնելով 8 մանր երեխաներ առանց մի որևէ ապրուստի միջոցի։ Սպանվածի բարեկամները զանգատ ներկայացրին Դաշնակցութեան շրջանային կոմիտէին, բայց կոմիտէն ոչ միայն արդարացրեց մարդասպանին, այլև խրախուսեց նրան։ Յետոյ դաշնակցական փաշաները պահանջեցին սպանվածի բարեկամներից ստորագրութիւն, թէ նրանք ոչ մի գանգատ չունեն Դաշնակցութեան տեղական ժարմնից և առհասարակ շատ գոհ են։ և երբ մերժում ստացան, սպառնում էին դիմել զինուորական ուժի։

Այս աշնանը Զ. գիւղի գիւղացիք հաւաքվում են և 70 հոգու ստորագրութեամբ մարդ են ուղարկում Հնչակեան կուսակցութեան լիազօրի ժօռ Վ. Ա. և խնդրում, որ նա իր զինուորներով գայ իրանց գիւղը, որի անգլին մեծամասնութիւնը հնչակեաններ են, և ազատ իրանց դէմ. զինուորների և խմբապետների բռնութիւններից։ Բայց հենց որ եկան հնչակեանները, իսկոյն գալիս է գիւղը խմբապետ Լ. 32 զինուորներով և պահանջում գիւղացիներից, որ նրանք իսկոյն և եթ բուրս անեն գիւղից հնչակեաններին, ասելով, թէ հնչակեանները «սօսիալիստներ են, ապառամիտ. կառավարութեան դէմ են և դրա համար թուրքերից վատ են, պէտք է սօցիալիստներին կոտորել։ Բոլոր գիւղացիների աղաչանքները՝ 2 օր ժամանակ տալ, որ իրանք հեռանան հնչակեաններին, ապարդիւն են անցնում։ «Ազգային ընկերութեան» քաշերը կըռուտրներով ներս են խուժում գիւղացի Ս. տունը և հրացանները պարզելով դէպի կանայք և երեխաները, պահանջում են դուրս անել այնտեղից երկու հնչակեան զինուորներին, սպառնալով հակառակ դէպքում սրի անցկացնել տանտիրոջը և նրա ընտանիքը, իսկ գիւղը մեծ տուգանքի ենթարկել։ Հնչակեանները աւելի զէջող են գտնվում և չը կամենալով պատճառ լինել եղբարասպան կռուի, մեռանում որ մէջտեղ կարող էր սարսափելի աւերել գիւղը, թողնում հեռանում են, հակառակ գիւղացիների մեծամասնութեան ցանկութեան։ Ի միջի այլոց դաշնակցականները հնչակեաններին մեղադրում էին հետևեալ բանով. երկու օր առաջ մի հնչակեան զինուոր գտնում է ճանապարհին 25 ր., որը վայր գըցած է լինում գրպանից մի աղքատ թուրք գիւղացի։ Հնչակեան խմբապետը կանչում է թուրքին և փողը յետ դարձնում։ Այդ բանը սարսափելի զայրացնում է մեր «աշխատաւոր մասսայի» պաշտպաններին։ «Ինչպէս կարելի է գտնել փող, այն էլ թուրքի, և յետ դարձնել տիրոջը»։ Այդ նրանց համար ուղղակի անասելանելի էր։

Որովհետև 2 հնչակեան զինուորներին տանում էին շրջապատված 32 դաշնակցականներով, գիւղացիները վախենում են, մի գուցէ ճանապարհին սպանեն դրանց գիւղի սահմաններում և գիւղը տուգանքի ենթարկեն։ Գիւղացիները մի Հ. անունով երիտասարդի զրնում են կալանաւորվածների հետ, որ չը թողնէ նրանց սպանեն ճանապարհին։ Ա. գիւղից վերադառնալիս Տ. գիւղում բռնում են Հ.-ին դաշնակցականները և խմբապետ Մ., այնքան ծեծում են խեղճ տղային, որ զինուորները վախենալով Հ. մահից, ազատում են նրան գազանացած խմբապետի ձեռքից։ Բայց Հ. չարչարանքները դրանով չեն վերջանում։ Գիւղից դուրս նորից բռնում են և սկսում ծեծել, ասելով. «դու ես այդ հնչակեան շեներին բերել գիւղը, սօցիալիստ ես, ուզում ես կառավարութեան դէմ կռիւ քարոզել։ Երեքտասարդը մի կերպ պրծնելով զինուորների ձեռքից, որոնք ուզում են նրան ճանապարհին սպանել, փախչում գնում է Դ. գիւղը, իր մի բարեկամի տունը։ Բայց և այստեղ էլ նրան հանգիստ չեն թողնում։ Իսկոյն հրաման է դալիս խմբապետից, թէ ոչ մի հայ իրաւունք չունի իր տանը օթևան տալ հնչակեաներին, հակառակ դէպքում սրի կանցկացնեն ըմբոստ ընտանիքը։ Խեղճ Հ. գիւղը ՄՄում է դրսում, եկեղեցու բակում և խնդրում է մի ծանօթ թուրքի, որ նա մի տեսակ իրան ազատի։ Թուրքը մարդ է ուղարկում Զ. գիւղը և խնդրում է տալիս Հ.-ի բարեկամներին նրա թշուառ դրութեան մասին։ Մի քանի գիւղացի ստիպված են լինում զինված գնալ Դ. և բերել Հ.-ին։ Այդ բոլորից յետոյ գիւղացիք վճռում են այլ ևս իրանց գիւղը կուսակցական մարդ չը թողնել, իսկ զինուորը բոլորովին չը պահել։ Այդ վճիռը կայացնում են իրանց ազատ կամքով և միաձայն, այնքան նրանց զզվեցրել էր դաշնակցականների արարմունքը, որի հետևանքը կարող էր շատ վատ լինել, բաժանելով գիւղացիներին երկու հակառակ թևերի։ Այն ժամանակ գալիս է գիւղը իր զինուորներով խմբապետ Լ. և մէկ-մէկ կանչելով իր մօտ գիւղացիներին՝ հրամայում է ստորագրութիւն տալ թէ կամենում են, որ դաշնակցական զինուոր լինի գիւղում, թէ չէ։ Ի հարկէ ոչ ոք չը համարձակվեց դաղան խմբապետի ներկայութեամբ իր կարծիքը ազատ յայտնել, բայց գիւղացիք գիւղից փախչում էին, որ նրանց զինուորները չը տանեն խմբապետի մօտ ստորագրութեան համար։ Զօռով խմբապետը կարողացաւ 30 ստորագրութիւն հաւաքել, բայց այդ 30-ից էլ 20-ը իսկոյն բոլորը յայտնեցին շրջանային կոմիտէին, յայտնելով, թէ ստորագրութիւնը տուել են վախից, բայց չեն ցանկանում մինչև անգամ զինուորի երես տեսնել։ բայց բոլորը մեց առանց հետևանքի և 10 մարդու ցանկութեամբ, հակառակ հարիւրաւոր ձայների, գիւղը զինուոր ուղարկեցին։ Մի թէ նոյն ծառումը չունին և «Երկրում» բողոքների տակ ստորագրութ

ընում չը խոովէ ձեր հոգիները, եղէք անվհատ և զգոյշ. սեղմեցէք ձեր շարքերը, կուենք մեր ներքին ու արտաքին թշնամիների դէմ և չը թողնենք որ նրանք տիրանան հայ ժողովրդի ճակատագրին։

Այո, ձեր այդ կոչերով վերջնականապէս ապացուցէք, որ դուք ազգային ցեցեր էք, դուք հայկական փոքրիկ Կրուշեվանները էք։ Ափսոս որ Կրուշեվանների ըսդը չունէք, (գնէ այդպէս ենք կարծում մենք) որովհետև նրանք ցանում են պօգրոմների սերմը և հունձի ժամանակ ակնատես են, թէ որքան արդիւնաւոր է բերքը... Բայց դուք, խղճուկ կրուշեվաններ, ինչ էք կարծում, ձեր շարքերում ձեզ մերձաւոր համարվող ընկերները չը պիտի պատժեն ձեզ, թէ ձեզ, ազգային ցեցերիդ, պիտի ազատ ապաէշ ման պօգրոմների լայն ծրագիրը իրագործելու։

Ձեր կոչերից մենք սարսափում ենք.

Այն պատասխանատուութիւնը, որ ձեր վրա էք վերցրել, ձեր տեղ մենք ենք ստիպում Շարունակեցէք ձեր խանդակիչ գերը, շարունակեցէք ձեր զրպարտութիւնները, որ մոլեմութի անկիւններում մենք կաղաքով դատեր ենք վարում, և, այդ ատիթով միակ փասը, որ մենք պահանջում ենք, մեր ներկայացրած երբէք. մինչդեռ իմ սկզբունքին հակառակ է եղել սկզբից մինչև այժմ մեղանում գոյութիւն ունեցող դատական կարգերը, որի համար դեռ ութն ամիս առաջ մշակել և բայանական ժողովին եմ ներկայացրել դատական գործերի մի համառօտ ծրագիր. բայց նա պէտք չէ եկել և չէր էլ կարող գալ դաշնակցական անձնաբաւակ կամայականութիւնների ատիթով։

Ամերիկայ չենք համարի սորան ցոյց տալ այդ զրուածքի պատճէնը՝ հասարակութեան գաղափար տալու համար թէ մեզնից որքան հեռու է կաշառքով դատ վարելու գործը։

Շարունակեցէք ձեր լուսանքները որքան կամենաք, պնուռամենայնիս մենք դաշնակցական զինուոր ենք, մեր ճակատը պարզ է, մենք պատիւ ունենք զինուորի բարձր կոչման վրա միշտ համարձակ կանգնելու. դուք այդ չէք կարող հերքել։ Եթէ այսօր ատիթ են գտել գանգատ վարժապետներ, մի քանի տափակ դիպլոմաններ դաշնակցական զինուորին հակայեղափոխական, խուլիգան անուանելու, պէտք է իմանալ, որ համեստութիւնը, պնուութիւնը առաքինի մարդկանց համար է, մինչդեռ մեր վարժապետներս ու տափակ դիպլոմաները վաղուց կորցրել են իրանց արժանիքը և որ նրանք մատնված են արդէն հասարակութեան զզուանքին։ Այսուհետև զուր է նրանց յոխորտանքը յեղափոխական գործի շուրջը։ զուր են նրանք ազմկում. նրանց յեղափոխական գոյնը արդէն պարզվել է. ժողովուրդը տեսաւ և գնահատեց այն խառնակիչ կոչերը, որոնցով խրախուսում են իրանց շարքերը՝ «կաւել ներքին թշնամիների դէմ». այն ինչ այդ կոչերը ցնդաբանութիւն են, և որ նրանց շարքերը երբէք չէ կարող խառնվել, մինչդեռ՝ մեր շարքերը վաղուց խառնվել են. բիւրօկրատներին իրանց իակ յայտնի է, որ նրանք ապուէսի շատ խորամանութիւններ գործ դրին, որ քայքայեին մեզ, սակայն այդ չաջողվեց նրանց, այն ինչ մեզ քաջ յայտնի է, որ նրանց շարքերը կազդ ու քաջալերողը չաղ պաշտօնները և վարձկան ծառայութիւնը կը լինի, մինչդեռ մեզանում ոչ պաշտօն կայ և ոչ էլ փողի վարձատրութիւն. փոխարէնը կայ բարոյական ոյժ և կայ զօրեղ կամք ու կորով։ Աչքի առաջ ունենցէք այս ոյժը և վերջակներիդ համաձայն երկարէք ոտքերդ։ Դուք յեղափոխականներ չէք, եթէ սակայն յեղափոխութիւնի մէջ չունենայիք ձեր անձնական նեղ հաշիւները. դրա հետ դուք ներկայացնում էք մարմնացած կիրք, մարդկային բոլոր իրաւունքները չսիրում էք ձեր արշինով միայն, և դրա համար էլ զուրս է գալիս, որ դուք փառաւորապէս շահագործում էք Դաշնակցութեան սրբազան անունը և հայ ժողովրդի խիղճն ու զգացումը։

Մի ժամանակ տաճկահայ դատի շուրջն էիք յոխորտում. այնուհետև, երբ վրա հասաւ ռուսական մեծ ազատագրական շարժումը, (նոր վարկի ապարէզ էր բացվել, անտան չուզեցիք մնալ. զուք բնի հաշտեցրիք ընդհանուր հայկական դատը ռուսական ազատագրական դատի հետ, որոնք իրանց տարբեր պայմաններով և տարբեր ուղղութեամբ երբէք չէին կարող հաշտվել. զուք հաշտցրիք, և դրա ապօրէն քայլը յեղափոխական մի մեծ ակտ համարեցիք. այնուհետև զուք դաւանեցիք առաջին դատը, իսկ երկրորդի մէջ էլ զզուելի դեր կատարեցիք միայն։ Դուք, դատարկ կարասներ, կարծում էք պատմութիւնը փատեր չէ արձանագրել այդ մասին։ Եթէ այսօր մի քիչ մոռին են այդ փատերը, վաղը ձեր զզուելի արարքները պէտք է աւելի պարզ ազացոյցներ տան։

Դուք, կեղծ յեղափոխականներ, որոնց էիք 1903 թուականին, երբ ինձ վիճակվել էր Բաթումում ընդհանուր խմբի կառավարչի պաշտօնը վարել՝ տեղական մարմնից գաղտնի, իբրև անտառ՝ իմ ակով մասնակցութիւն ունեցել եմ բանտարական հարցում. եթէ կամենում էք՝ վրացի ընկերներից փատեր ներկայացնենք մամուլում։

Դուք, կեղծ յեղափոխականներ, որոնց էիք 1903 թուականին, երբ ինձ վիճակվել էր Բաթումում ընդհանուր խմբի կառավարչի պաշտօնը վարել՝ տեղական մարմնից գաղտնի, իբրև անտառ՝ իմ ակով մասնակցութիւն ունեցել եմ բանտարական հարցում. եթէ կամենում էք՝ վրացի ընկերներից փատեր ներկայացնենք մամուլում։

Այն ժամանակ, երբ սոցիալիստ-յեղափոխականները խմբերով ասնվում էին բանտերում և աքսորավայրերում, զուք որտեղ էիք. իբրև «դաշնակցականներ» անպատակ ձեզ համար ապատ ման էիք գալիս, զուք զանում էիք նոյն իսկ ձեր բարոյական ապաքինութիւնը...

Եւ այժմ, բաբի լոյս ձեզ. զուք ոչտեղից բուսաք. չէք էլ թոյլ տալիս, որ այդ կուսակցութիւնները շնորհիւ յեղափոխական նըպատաւոր պայմանների քաղէին իրանց աշխատանքի պտուղները։ Բանտը որքան մօտենում և կապվում էր նրանց, զուք այնքան խոչընդոտ հանդիսացաք և աշխատեցիք միշտ խլել այդ կապը. ձեր դերը կատարեալ ըզգուելի էր. ազատագրական շարժման հրապարակը լայն էր, և զուք Անշա-խանումին տեսաք. Ֆոմինային մոտացաք. ձեր դաղափարը թուրքական էր. զուք առանորդվեցիք սէն փոքրերով, և յանկարծ մի գեղեցիկ օր, ձեր ճակատը պայծառ, թեերը վեր քաշած փանլվանի նման զուրս եկաք և յայտարարեցիք, որ Դաշնակցութիւնը, ինչպէս սահմանից այն կողմը, պէտք գործէ և այս կողմը։ Եւ անշուշտ այդպիսի անմիտ յայտարարութիւնը, առանց նախատեսելու իր ծանր հետևանքները, դառնում է գաղափարական հարց, և այդ ատիթով զուրս է գալիս դրական չարիքների պայմանաւորված մի խմբակ (իբրը թ յեղափոխական) և անպատկառ կերպով ջատագովում և գրատում այդ մեծ ակտը։

Եթէ Դաշնակցութիւնը մի այնպիսի յեղափոխութիւն է, որ պէտք է բաւարարութիւն տայ ընդհանուր հայութեան քաղաքական և անտեսական պահանջներին, այդ դեպքում պէտք է որ այդ մեծ ակտը հաւասարապէս տարածվէր և յայտարարվէր ամեն երկրի վրա։

Ի՞նչ է նշանակում կովկասեան նախագիծ, և ինչու չը լինեն պարսկայ, ամերիկայ, եգիպտայ և բուլգարայ նախագծեր. ձեր անմիտ թուղթիկներով զուր էք ժողովրդին խաբում, իբր Դաշնակցութիւնը իր ծրագրից երբէք չէ շեղվել և իբր կովկասեան նախագիծը ապօրինի ծնունդ չէ, նա առաջ է եկել ընդհանուր ժողովի գծած հիմունքներով և այլն։ Իսկ մենք ձեզ կասենք, որ կովկասեան նախագիծը ոչ միայն ապօրինի է, այլ և դաւեանն մի ակտ է նա, որին այդ ձևով հրապարակ հանելու իրաւունք չունէր մինչև իսկ ընդհանուր ժողովը, եթէ վեց ամիս առաջ առանձին ծանուցագրերով չէ տեսակցել դաշնակցական համայնքի կարծիքը։ Այսպեղ համայնական իրաւունքի հարց կայ. կարդացէք 1904 թուի ընդհանուր ժողովի արձանագրութիւնը։

Ձեր թռուցիկներում փատերը ազատելով երբէք չէք կարող արդարանալ. ձեր սխալը մեծ է, որի համար զուրս պատասխանատու էք ժողովրդի առաջ։

Ընդհանուր ժողովը Կովկասի գործունէութեան սահմանները ինքնապատգամութեան հողի վրա է հաստատել, մինչդեռ զուք անցել էք Հնդկաստան, և դեռ պնդում էք, որ դաշնակցական հողի վրա էք կանգնել և զուք մի մազաչափ անգամ չէք շեղվել այդ հողից։ Ապա ի՞նչ են այս բարդութիւնները և ինչու զաւանեցրում մի գլուխ տաքածվել է խողովակութիւնը. ինչու բողոքներ են թնդում ձեր դասախօսների վրա և զուք չէք արձագանգրում այդ դէպքերը. ինչու չէք յայտարարում, որ ամբողջ ժողովուրդը ձեռնասուն է մնացել՝ դեռ ութ ամիս առաջ և չէ վճարում իր ամսավճարները մի կօպէկ անգամ։

Ո՞վ է տուժողը. դուք, թէ գործը։

Մեր աչքի առաջ քայքայվող գործի համար չը բողոքեցք, մեր աչքի առաջ հարստանալ ված ժողովրդի բողոքը չը ներկայացնեցք ձեզ։

Մեր խմբերին ամեն տեղ զուք բռնացել էք. ուզում էք զօռով գուրս կորզել նրանց մէջ ուժեղ տեղ գտնող համակրանքը և նորը խլել. երբ այդ չէ այդոփում ձեզ, զուք նրանց յայտարարում էք խուլիգան, զաբ նրանց արհամարհում էք, զուք նրանց անվանել էք գործից և նրանց տեղ ընդունել ամենատափի մարդիկ։ Երէկվայ մեր ճանաչած գաւաճանը այսօր կօտիսէ է եղել, ճիպկիիր՝ գաստիսու։ Այդ ամենը տեսնելուց լուռ մնանք չը բողոքենք։ Այս բոլորը նորութիւններ չեն. այս բոլորը կայ և գոյութիւն է ունեցել այն օրից, երբ զուք շարադրում էիք կովկասեան նախագիծը և նման փիլիսոփայական պրօպաղանդը։

Եւ զեռ ձեր երգանիկ Ֆաժակները գրում էլ են անամօթաբար, որ Դաշնակցութիւնը զոլում է, բիւրեղանում է...

Հնաբրքիր է. ինչու անցեալ տարի Ֆաժակը երեսնում հոգաբաւոր ունկնդիրներ է ունեցել, սակայն այս տարի իր գլխին հաւաքվել են իր ցաւագրութիւնը ունեցող իր ընկեր-դասախօսները միայն, և ոչ մի ժողովուրդ։ Եթէ անցեալ տարի Ֆաժակը ունեցել է հազարաւոր ունկնդիրներ, թող այժմ լաւ հասկանայ, որ ինքը նոյն դատարկ մարդն է, բայց նրան միայել և ոյժ էր տալիս իրան անձնուէրների ազմի ձայնը։ Եւ այսօր նոյն ազմիկները Ֆաժակների համար խուլիգան են համարվում. պատճառը շատ պարզ է։

Արհեստական միջոցներով հաւաքված սուրբգրութիւնների փոխանակութիւնը երբէք թող չը միտիթարէ ձեզ. այդ միջոցը ձեզ չի փրկի. թերթի էջերը զուր էք հեղեղում և ազացնում. ապա տեղ տուէք ձեր ընկերների փիլիսոփայական վարդապետութիւնները լսելու, մանաւանդ նրանց կարծիքը՝ տաճկահայ դատի վերաբերմամբ. ձեր գրիչը մատամբ պարզել է արդէն ձեր ընկեր Կոմսը, որ կովսեցին կթան կով չէ, ժամանակ է որ տաճկահայը իր համար տեղնդէ երկրում գործ և միջոց։

Այդ և նման յայտարարութիւններից յետոյ կառաջեալ անառակութիւն է, որ այդպիսիները դեռ իրանց դաշնակցական են համարում։

Դեռ ձեզ նման կեղծ-յեղափոխականներիդ նկարագրելու համար անթիւ փատեր ունենք։ Ձեր կենդանութեան ժամանակ զուք բաղդ կունենաք ձեր կենդանագրութիւնը կարդալու. ամեն բան կապացուցվի փատերով։ Ձեզ պէտք անհիմն զրպարտութիւններ, կարօտ փատերի, մենք չենք թոյլատրի մեզ։

Միհրան

Յ. Գ.—Դատաստանական գործերի դասախարակիչ և օգտակար եղանակը։

Մինչև այժմ դաշնակցական մարմինների վարած դատաստանական գործերը օրինակաւորութիւնից զուրկ էին, որովհետև դատական վարիչներ կոչվող անհատները սկզբունքի հասմաձայն ոչ մի հրահանգված ուղղութիւն չունեցել դատական գործերի հիմքը որոշող. շատ պարզ է, որ գործերի այդ անորոշ կերպարանքը, փոխանակ օրինաւոր և անաչառ գործունէութեան, կը վարէր այնպիսի գործ, որը ոչ միայն դատարակիչ բնաւորութիւն չէր կրի, այլ և իր կողմնութեամբ կը խորտակէր ժողովրդի այն անսահման վստահութիւնը, որ նա ունեցել է դէպի Դաշնակցութիւնը։

Ի նկատի ունենալով ժողովրդի միահամուռ ջգգոնութիւնը այն ինքնակոչ դատաւորների դէմ, որոնք իրանց ենիչերական վարմունքով անինայ հարստահարել են հասարակութիւնը, և ոչպէս դի ժողովուրդը այս իրաւազուրկ վիճակից մեղանամայն ազատված լինէր, մենք կառաջարկէինք հետևեալը։

1) Սկված ամենայնին գիւղերից՝ ընտրական սկզբունքով կազմել դատաստանական մարմիններ, տալով այդ մարմիններին դատական օրէնքների ժամանակաւոր կանոնագրութիւն։

2) Պարտաւորեցնել դատաստանական մարմիններին իրանց վիճակում քննութեան առնելու գործերը անպայման դրազրութեամբ կատարվին և ուղարկվեն դատական գործերի գլխաւոր վարչութեան, որպէսզի ամբողջ տարվայ զբաղված գործերի համար հաշուոյ լինի իրաւաբանական ընդհանուր ժողով զուսարել և այդ ժողովում հաւաքված գործերի ամբողջութեան զոյնը որոշելուց յետոյ առանձին աշխատութեամբ ջանք գործադրվէր օրէնքների ժողովածու կազմելու, որը միակ միջոցը կը լինի ժողովրդի իրաւապիտական զարգացման։

3) Մինչև օրէնքների ընդհանուր ժողովածու կազմելը՝ դատական մարմինների համար պահանջված ժամանակաւոր կանոնագրութիւնը ինքը բայանական ժողովը թող մշակի և յայտարարի ամբողջ ազգաբնակութեան։

4) Պէտք է աշխատել, որ կանոնագրութիւնը գրված լինի զուտ դասախրակչական և բարոյագիտական հիմքերի վրա, որ նա գործ ունենայ առանձնապէս մարդկանց պատուի հետ. եթէ այս միջոցը անգոհացուցիչ է ընդհանրութեան, ապա և խոտ միջոցներն էլ անվայել են և անհամապատասխան Դաշնակցութեան բուն ոգուն. աչքի առաջ ունենալով մեր խաղաղ գատավարութեան հետ անշէութիւն ունեցող հակասութիւնները, հետևապէս անբաւականներին պէտք է տալ ազատութիւն դաշնակցական դատարաններից ընդհանուր դատարանների դիմելու, պայմանով՝ որ Դաշնակցութիւնը իր ծանօթ գործի հացեցէն կայացնի իր վճիռը։

Նոյնը

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ռոստով—Դոնի վրա, 3 նոյեմբերի

«Մշակ» լրագրի 224 համարում կարդացի Թոմա վարդապետի նամակը, որի մէջ ասում է՝ «ուր մնային էջմիածնի օգնի համար 1905 թ. ժողոված գումարները»։ Արդարութիւնը երևան հանելու համար խնդրում եմ «Մշակ» լրագրի խմբագրութեան տեղ տալ այս իմ բացատրութիւնս։

1905 թ. սկզբներում Հին-Նախիջևան քաղաքում հայ սրիխինների և օրիորդների մէջ միտք ծագեց, որ Էջմիածնի միաբանութիւնը և ճեմարանը, զրկվելով եկեղեցապատկան կալուածների արդիւնքից, տնտվում են կրիտիկական դրութեան մէջ, հարկաւոր է ժողովարարութիւն։ Դրա համար կազմված ժողովարարութիւնը ես էի մանածում։ Նուէրներ ստորագրողներ եղան և փողի գումարը հասաւ մէկ հարիւր տասնհոգ բուրլի 97 կօպէկի, որից իմ ստացած հարիւր բուրլին խկոդն և եթ ուղարկեցի Արիստակէս արք-եպիսկոպոս Դաւթեանին ներկայացնելու Վեհափառ Կաթողիկոսին, և ապա ժողովարարութիւնը շարունակել և ապարիկ հաւաքել, մինչ այդ վերասաւ մայիսի 12 ազգալ և ամեն բան դադարեց։ Այդպէս լինելուց յետոյ աւելորդ չեմ համարում ասել, որ Թոմա վարդապետը և Ստեփան Պողոսեանը կաթողիկոսի օրէնութեան կոնդակը, համարաւ 169, ինձ յանձնելու ժամանակ իմ խնդրանքը ստուգին ժողովարութեան իսկական թերը, նուիրատուների ստորագրութեամբ ուղարկված փողի և ապառիկների հետ և ոչ մի սխալ մինչև անգամ չը զատն։ Եթէ Թոմա հայր սուրբը վերև ասածներս մոռացել է, կրկին ստուգելու համար կարդալիս նրան կոնդակը և իսկական ժողովարարութեան թերթը՝ գաւազարութեան մէջեցով, այն պայմանով, որ յետ ուղարկէ։

Անտա Մելիքեան

Թիֆլիս, նոյեմբերի 6-ին

—

Ձեր նամակից («Մշակ»—21 հոկտեմբերի) երևում է, պ. Ծխական, որ զուք մեր հեկեղեցու գործերից կամ բոլորվին անտեղեակ էք, կամ նպատակով էք անտեղեակ ձևանում։ Մեծ անբարբարութիւն է, որ զուք ձրգանեալ անուանով էք քարեր շպրտում, որպէսզի շատ հանրամանքներ ծածուկ մնան և ձեր պատկերը չը բացվի։ Առայժմ միայն ձեր նամակի ատիթով հետևեալն եմ ասում.

1) Զարաչաբ սխալվում էք, թէ՝ ես միայն զանկին եմ եկեղեցի գնում, այն ինչ շատ անգամ եմ եղած եկեղեցում. յաճախ էլ գնացած եմ և՝ ժամերգութիւն չը եղած ժամանակ՝ իմ երեսփոխական կարգադրութիւններն անելու համար. և մինչև մինչև եկեղեցի գնալը մեծ հաշտաւորութիւն է գործերը կանոնաւոր կատարելու համար։

2) Երևում է, որ չը հետաքրքրվող ծխականներից մէկն էլ զուք էք. եթէ գործին ամենի մոքով ծառայող լինէիք, կամ նեղացիք, որ ձեռնը, քաղաքական խռովութիւնների պատճառով անհնարին լինելով ծխական ժողով կազմել՝ հրաւիրեցի ծխականներին միայն գարնան վերջը, որոնք իրանց միջից երկու հոգուներս ընտրեցին 1904 և 1905 թ. հաշիւները տեսնելու. առայժմ իմ երեսփոխանութեան շրջանները չէ։

3) Ինչպէ՞ս կարող էք հոգևոր իշխանութիւնից մշտական հաշուետուութիւն պահանջել, որտեղ որ զա՛ բան պրօբէնիայի՝ չէ թոյլատրվում. այդ միանգամայն ժողովի գործն է, որը իր միջից ընտրած ժամանակաւոր հաշուետուների միջոցով պէտք է իր ցանկացածը դլուխ բերէ։

4) Ես դպրոցի հոգաբարձական ժողովներին չեմ կարողանում ներկայ լինել, որովհետև նշանակած ժամանակներին ես միշտ զբաղված եմ լինում աւելի անպիսի գործերով, որոնք միայն ինձմով կարող են լինել իսկ հոգաբարձութիւնը կարող է և առանց իմ իր վրա դրած պարտականութիւնը հաստատակամ կատարել։ Նրան տրված է դպրոցական շինութիւնը, կրպակները, դպրոցը բանալու, կառավարելու և ժողովրդից կամաւոր տուրքեր հաւաքելու իրաւունք։ Դպրոցը կարող է եկեղեցուց, եթէ ունի վերջինս, միայն տարեկան նպաստ ստանալ, որի նիւթական դրութիւնը բոլոր անդամներին յայտնի է, ինչպէս հոգաբարձական ընտրութեան ժողովում պարզեցի։

5) Ի՞նչ նպատակով զուք ակնարկում էք և հայր Գրիգորիս քահ. Երզնկեանցին. եթէ երեսփոխանական գործ ունիք, պէտք է իսկ հետ ունենաք և ոչ թէ տէր-հօր հետ, որը մի մասնաւոր անձն է երևում իմ երեսփոխանական գործունէութեան մէջ. ես եմ ամբողջ վին պատասխանատու, իսկ նա միայն կողմնակի օգնող և ամենայն ազնութեամբ և ճշտապահութեամբ հաշիւներ պահող։ Երևում է ձեր զրութեան հոգուց, որ զուք սարսափելի հակահոգևորական ուղղութեան մարդ էք և ձեր գլուխն էլ պտոյտ է գալիս, երբ տեսնում էք մեր գործերում մի հոգևորական խառնվելիս. բայց պէտք է լայնամիտ լինէք և հասկանաք, որ մեր հոգևորականների մէջ շատ արժանաւոր անձինք կան, որոնցից մէկն է և հ. Գրիգորիս քահ. Երզնկեանցը, որի աշակցութեամբ, օգնութեամբ և խորհուրդներով պ. Մ. Տէր-Մելքոնեանց և հանգուցեալ Սա. Աւետիսեանց երեսփոխանների ժամանակ մեր եկեղեցին վիճակի խարսուլ և անշուք եկեղեցուց վերածվից մի պատուական ընտրի և գովասի եկեղեցու, որի զրութիւնը նախկին երեսփոխանների ժամանակ ցաւալի էր, իսկ եկեղեցական փողերն էլ անհաշիւ զոլորշացած։ Հ. Գրիգորիս քահ. Երզնկեանցի, իբրև միայն աշակցող մարանի, աչալուրջ հսկողութեամբ և հաանդէպ մեր եկեղեցուն։ Թակոն զրութիւնը արդէն սկսել է բաանալ, մինչդեռ առաջ պարքեր էին մնում մեզ։ Եթէ զուք անձնական հաշիւ ունէք տէր-հօր հետ, և նա ձեր ծխատէրն է, մեր եկեղեցական զուտ ընտրական իրաւունքների զօրութեամբ կարող էք նրան կամ ընդունել, կամ մերժել, իսկ նա էլ դարձեալ կարող է նոյն իրաւունքով ձեզ իր ծուխ համարել կամ բացասել։ Երկու կողմն էլ ազատ են. իսկ զուտ անձնական հաշիւ ունենալու պատճառով ասել՝ թէ երկու տարի երեսփոխան չը կայ, որովհետև հաշիւներ պահողը հ. Գրիգորիս քահ. Երզնկեանցն է, զա ուելի քան թեթևամտութիւն է, որովհետև մեր ծխականներից ամեն մի ապնիս. հետաքրքրվող անձն արդէն գիտէ, որ ամեն բան իր տեղն է և ամեն բան էլ եկեղեցում շատ օրինաւոր կերպով է առաջ գնում։

Զրկինանց եկեղեցու երէցփոխ՝

Յ. Ասաւորեան

—

Թիֆլիս, հոկտեմբ. 30 ին

Մօտ մէկ և կէս ամիս առաջ այստեղ էր եկել Ախալցխայի հոգաբարձութեան ներկայացուցիչ պ. Ֆամարանեանը՝ վարձելու աւազուսուցիչ։ Հոգաբարձութեան ցանկութիւնը—վարձել մի հեղինակաւոր, աչքի ընկնող այժ երկու դպրոցների համար—չաջողվեց։ Վերջապէս ուաց ուսուցիչ ընտրեցին պ. Ֆ. Սամուէլեանին, իսկ օգնակ. ինձ։ Պ. Ֆամարանեանը երևի կասկածելով, որ մենք կարող ենք մյլ դպրոցների հոգաբարձութեան հետ պայմանագրվել, շտապեց մեզնից պայմանագրերի վերցնել, որպէսզի վասահ լինի, որ մենք կապված ենք Ախալցխայի դպրոցների հետ. չը վստահանալով նոյնպիսի մեր ոճի վրա, առանձնապէս խնդրեց զրել այն ձևով, ինչպէս ինքն է ցանկանում։ Այդ ձևի գրաւոր պայմանագիր նա վերցրել է պ. Սամուէլեանից, նոյնպիսին վերցրել է և ինձնից պ. Յ. Մելիք-Չհանեանի ներկայութեամբ, որի մօտ և ինքը հոգաբարձուն կարդացել է իր պայմանագրերը հետևանալ ընվանդակութեամբ—Բանաւոր կերպով համաձայնութեան գալով Ախալցխայի հայոց ծխ. երկսեռ դպրոցների մեծագոյն հոգաբարձութեան հետ—սրանով (գրաւորով) պայմանաւորվում եմ սահմանել յիշեալ դպրոցների աւազ ուսուցչի օգնականի պաշտօն տարեկան 300 բուբլի ռոճիկով և 20 դաս (հայոց լեզուից և թուաբանութիւնից) որոշելիք դասատուով։

Նա խոսք տուեց Ախալցխա դնալուն պէս ի հաշիւ իմ ռոճիկի ուղարկել մի ամսական, որից յետոյ պէտք է ճանապարհ ընկնէինք։ Պ. Յ. Մելիք-Չհանեանի ներկայութիւնը և վկայութիւնը բաւական էր. ես աւելորդ համարեցի, ուելի ճիշտ, սխալվելի զրաւոր պայման վերցնել հոգաբարձուից։ Այդ օրից անցաւ մօտ մի շաբաթ, երբ ամսոյ 22-ին այստեղ եկաւ հոգաբարձութեան կողմից մի ուսուցիչ, որ իր հետ էր բերել հոգաբարձութեան դրամական որոշումների մի ցանկ։ Ամենասայն որոշումն էր—մերժել պ. Սամուէլեանին և ինձ։ Մենք չէինք ուզում հաւատալ այդպիսի մի լրատարացութեան. շատ անարդար էր այդ և պ. Մելիք-Չհանեանի համար, որի ներկայութեամբ պայմանագրվել էի ես։ Պ. Սամուէլեանին բոլորովին մերժել էին, իսկ ինձ նշանակել ուսուցիչ (24 դաս 720 ր. ռոճկով), այնպէս որ նախկին minimum ռոճկի փոխարէն պէտք է սատանայի maximum 720 ր.։ Ինչ խոսք, որ ես չէի ցանկանում նոյնիսկ լսել հոգաբարձութեան այդ նոր առաջարկը։ Ինձ յայտնեցին, որ հոգաբարձութեան վճիռները վերջնական են և որևէ փոփոխութիւն մոցնել չէ կարելի։

—Եղբայր, հոգաբարձուները ազատ մարդիկ են, նրանցից ինչպէս կարելի է նրբութիւններ պահանջել, արհեստաւոր մարդիկ են վերջապէս։ Պ. Ֆամարանեանը լիազօր չէ և դեռ ձեր նկատմամբ, ասում են ինձ։

Հիանալի փաստաբանութիւն. լիազօր չէ և դեռ, բայց նա «տարաբերութիւն» է ունեցել մեզանից զրաւոր պայմանագիր վերցնելու և մեր դեմ ոչ ձեռքը կապելու, որպէսզի հնարաւորութիւն չունենանք այս կամ այն զբաղի հոգաբարձութեան հետ պայմանաւորվելու։

Տէրտ են—այն, անկեղծ խոստովանութիւն—ազատ են հոգաբարձուները, բայց մի՞թէ նրանց ազատութեան զոնը մենք պէտք է դառնանք, նրանց խախտիթիւնը մենք քաջենք։

Ցանկանում էի հասարակական գատ բանել կամ գիմել հոգևոր կառավարութեան. բայց ձգ չը գնել, որ զրական ոչ մի արդիւնքի չէին հասնի։

Ինձ պէտք է ասէին, հոգաբարձուները խամ են, տգէտ են, մի «փոքրիկ թիւրիմացութիւնս է—ոչինչ. քաջեցէք, քաջեցէք նրանց ազատութիւնը. երեի կը գայ մի օր, երբ ամեն ինչ կը բարեփոխվի. չէ՞ որ էվոլիցիան կը յաղթանակի...։

Այո, էվոլիցիան մեծ նուաճումներ կանէ մասնաւորապէս մեր մէջ, քանի որ ազգս պրօցէսը մտել է մեր մէջ Ֆաբս. ինտելիգենտ ոյժերին կը հեռացնենք ասպարէզից, ասարկելով, որ նրանք բիւրօկրատներ են և կրնարենք բանկաներին, որոնց խելքը չաջնչութիւնից դէնը չէ անցնում։

Այսչափ Ախալցխայի հոգաբարձութեան պաշտօնական-վարչական ընդունակութիւնների մասին. բայց նա գտել է և մանավանդ ժամն նոր գիւտեր. օրինակ—մի վարժուհուս, որ ունի փորձառութիւն և զուլում են մանանանդ ուսուց լեզուի դասատուման համար, հոգաբարձութիւնը տուել է 24 ժամ գծագրութիւն և նկարչութիւն?!! (Ծան. Դասերը բաժանել էր հոգաբարձութիւնը)։

Վարժուհին բողոքում է, որ այդ ձևով վարվել նշանակում է բղրոբոլին բթացնել։

—Ինչու էք նեղանում. հոգաբարձուները ազատ են, ժամանավարժական հակացողութիւն չունեն. այս տարի համաձայնեցէք, ժամանակով լաւ կը լինին։

Ճեմարանի Ա. դասարանն ուարտղին առաջարկել են 24 դաս (720 ր. ռոճիկ, իսկ Գ. լսարանասարին 18 դաս—540 ր.)։ Մինչև կեսլ ասեմ, որ շատ կամ քիչ դաս տալը նշան է, թէ ում են աւելի գնահատում և լաւ ոյժ համարում։ Լաւագնաւարաբ բողոքում է այդ կարգադրութեան դէմ, նա ասում է, որ փորձառութեամբ իրանք նոյնն են, բայց ցնդոզով ինքը բարձր է, որ այդ ձևով չէ կարելի մարդու արժանապատուութիւնը վիրաւորել։

—Այնինչ, այս տարի համաձայնեցէք, հոգաբարձուները ազատ են, նրանք գաղափար անգամ չունեն ճեմարանի մասին, ուր մնայ Զ. դասարանի և Գ. լսարանի մասին։

Այո, այո. Ախալցխայի հոգաբարձուները ազատ են։

Ա. Մեղ.

Յ. Գ.—Այս յօդուածը պէտք է յանձվի խմբագրութեան մօտ մի ամիս առաջ. սակայն նախքան խնդիրը հրատարակի վրա դնելը, մասնաւոր զրութեամբ դիմեցի Ախալցխայի հայ զարդուցների հոգաբարձութեան և բացատրութիւն պահանջեցի իրանց ներկայացուցչի վարմունքի համար. մինչև այսօր ոչ մի պատասխան չեմ ստացել. հասկանալի է ինչու. արդարանալ չեն կարող։ Այժմ խնդիրը գնում ենք հրատարակի վրա. տեսնենք ինչպէս են փատաբանում զդրոցի մինիստրները։

Ա. Մ.

—

Կարս, հոկտեմբ. 25-ին

Մեր ծխականներից պ. Ե. Քհոսյեանցը իր եղբօրը պահելիս՝ փոխանակ շապ անդամ ծախսերի, հարանիքի ուրախութիւնը կատարից համեստ կերպով, իսկ միշտ տեղի ունեցող անդամատակ ծախսերի փոխարէն բարեսք համարեց մի հարիւր յիսուն բուբլի նպատել տեղիս նորակառոյց եկեղեցու շինութեան գործին, որ մուրացկանութեամբ է շարունակվում։ Պատիւ իրան այդ օրինակելի գործի համար։ Պ. Քհոսյեանցը մի միջակ ապրուստի տէր անձնաւորութիւն է և ոչ հարուստ։

Մ. ա. քահ. Տէր-Պետրոսեան

—

Թիֆլիս, նոյեմբ. 6-ին

Պ. Ադ. Մելիք-Ալլահվերդեանը «Մշակ»-ի 242-րդ համարում տպագրել է մի նամակ, որի մէջ բողոքելով Ներսիսեան դպրոցի այժմեան հոգաբարձութեան դէմ՝ բաւական տեղ է նուիրում նաև իմ անձնաւորութեան։

Իմ վերաբերմամբ նա ասում է, 1) որ նախկին հոգաբարձութիւնը մերժել է իմ զեկուցումը (մի քանի ուսուցիչներ արձակելու մասին), «գտնելով որ իմ բերած պատճառաբանութիւնները անհիմն են և անարդար», 2) որ հոգաբարձութիւնը այն կարծիքն է յայտնել, թէ իմ այդ տեսակ զեկուցումը մնտեղի է, մանաւանդ այն պատճառով, որ ես ինքս հրաժարվում եմ տեսչութեան պաշտօնից և նոր հոգաբարձութիւն է գալու, 3) որ իմ անձնական կիրքը դէպի պ. Մելիք-Ալլահվերդեանը՝ յաղթել է իմ նրա մասին ունեցած նպաստաւոր կարծիքին, և ես ցանկանալով հասնել իմ նպատակին, և չը կարողանալով ուրիշ պատճառ բերել՝ հնարել եմ նրա ջղայնութիւնը, 4) որ իմ կարծիքը նրա «ջղայնութեան» մասին՝ զուտ զրպարտութիւն է։

Ես շատ կարճ կը պատասխանեմ։

Առաջին կէտում մինանդամայն ազատագրված է հոգաբարձութեան որոշումը. իմ զեկուցման մասին հոգաբարձութիւնը այդպիսի որոշում չէ արել։

Երկրորդ կէտում իրողութիւնը յեղաշրջված է. այն կարծիքը, որ պ. Մելիք-Ալլահվերդեանը վերադրում է հոգաբարձութեանը՝ իրօք ես եմ յայտնել (իմ առաջին զեկուցման մէջ), և միայն հոգաբարձութեան պահանջին անսալով տուել եմ այդ (երկրորդ) զեկուցումը։

Երրորդ կէտը երևակայութեան արդիւնք է. պ. Մելիք-Ալլահվերդեանի դէմ ես ոչ մի անձնական կիրք չեմ ունեցել և այժմ էլ չունեմ, բացի օրանից՝ ես անձնական կիրքով չեմ զեկուցվում։

Չորրորդ կէտին գալով՝ յայտնում եմ, որ ես վարվել եմ այնպէս՝ ինչպէս ինձ թեստատարութեան կոչեցեալ ուսուցիչներին, որոնք հնչակեաններին խաղաղարարներ են անուանում։

Պ. Տ. գոնէ քաջվեցեք «Kaçnii»-ի մէջ լոյս տեսած մի թուղթ յօդուածագրից Շուշուց ուղարկված, որտեղ ուրախութիւն է յայտնված, որ հնչակեանները ուժեղանում են, հետևաբար այստեղ հայերի և թուրքերի մէջ բարեկամութիւնը աւելի ևս կամրապնդվի։

Ասացէք, խնդրեմ, ինչ ոտնձգութիւններ էք տեսել հնչակեաններից, որ կոկորդիսով արշաւանքներ էք թափում և չարագուշակ նամակներ անում։

Ցաւալի է, որ զուք չէք ուզում լաւը փափաք գանգատել, և արտաւորելու գիտաւորութեամբ Հնչակեան ս.-դ. կուսակցութիւնը, պրովակացիա էք անում և մամուլի էջերը վիրաւորում սաստ սուտիքներով և ինսինուացիաներով։

Artemios

ԴԱՇՆ

լին մենք ուղարկեցինք Բաքու պ. Բ. Գոլուխանեանին, որի նախաձեռնութեամբ քայլել է ժողովարարութիւն Արմաւիրում ցորեն գնելու համար։

—

«Баку» լրագիրը հաղորդում է, որ Բաքուի հայ-յեղափոխական «Դաշնակցութեան» կենտրոնական կոմիտէն հրատարակել է մի կոչ, որտեղ նա մատնացոյց անելով այն հանգամանքը, որ վերջին ժամանակներս Բաքւում և նրա շրջակայքում երևան են եկել բազմաթիւ կասկածելի անձնաւորութիւններ և խմբակներ, որոնք, յեղափոխական անունով, «մասնաւոր էքսպրօպրիացիայի» մեծախոստում դրօշակի տակ մաած զբաղվում են կողոպուտով, բռնի փող կորզելով, և իրանց նպատակներին հասնելու համար կանգ չեն առնում ոչ մի միջոցի առաջ, մինչև իսկ սպանութիւնների առաջ, այդ առիթով յայտարարում է ի գլուխ ամենքի, որ Բաքուի հայ յեղափոխական «Դաշնակցութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէն վճռել է կռիւ մղել կատարվող բրգնութիւնների դէմ, ինչ ձևով էլ որ նրանք արտայայտվելու լինեն»։

—

Նոյեմբերի 8-ին, երեկոյեան ժամը 8-ին Գունիբրկայա փողոցում Սօֆիա Եմելեանովնա Բոյկոին իր սեփական տանը ատրճանակի հարուածով ծանր կերպով գլխից վիրաւորում է իր տան մէջ ապրող Վասիլի Տիխոնովը, որը ծառայում է Կուզնեցօվի թէյատանը։ Ցիշեալ Տիխոնովը Սօֆիա Բոյկոին վիրաւորելուց յետոյ ատրճանակի 2 հարուածով ծանր կերպով բերանից վիրաւորեց իրան։ Վիրաւորված Բոյկոն բացատրել է, որ Տիխոնովը իրան առաջարկութիւն է արել, բայց մերժում ստանալով վիրաւորեց Բոյկոին և իրան—Տիխոնովին։ Վիրաւորվածները ուղարկված են Միքայէլեան հիւանդանոցը։

—

Բալաքարի կայարանից հաղորդում են, որ ներկայ նոյեմբերի 7-ին, երեկոյեան մօտ ժամը 5-ին կապալառու Օհանեանի բանւորը՝ պարսկահպատակ Իբատ Մամադ-օղլին, երբ բանւորական գնացքը շարժվեց, վագոնների միջով անցնելիս, ընկաւ գնացքի տակ և խլոյն մեռաւ։

—

«Око» լրագիրը հաղորդում է, որ Մոսկվայում և գաւառներում վերսկսել են իրանց գործունէութիւնը պօստ-հեռագրական դաշնակցութիւնները։

—

Երկաթուղային դաշնակցութեան մէջ պառակտում է տեղի ունեցել։ Դաշնակցութեան անդամների մի մասը պահանջում է դառնալ պրօֆեսիօնալ-մտաւորական կազմակերպութիւն և ոչ թէ քաղաքական։

—

«Око» լրագրի մէջ տպագրված են քաղուածքներ ֆինանսների մինիստր Կոկովցեվի ներկայացրած զրութիւնից ապագայ նախահաշուի մասին։ Պետութեան զրութիւնը, ասված է զրութեան մէջ,—սպառնում է ծանր բարդութիւններ առաջ բերել։ Եթէ որ շարունակվելու լինի ներկայ խառնափնթոր ժամանակաշրջանը, ասում է Կոկովցեվը, գուցէ միջոցները բաւարարութիւն չը տան նոյնիսկ ամենաանհրաժեշտ, անխուսափելի ծախքերին։ Ներկայ տարվայ դեֆիցիտը սպասածից աւելի է դուրս գալու։ Իսկ եկող տարի դեֆիցիտը անխուսափելի է։ Կոկովցեվը անհրաժեշտ է համարում հրաժարվել ներկայի կրեդիտները աւելացնելու ձգտումից և վերաքննել բոլոր տեսչութիւնների կրեդիտները։*

—

Աւելացնելու ձգտումից և վերաքննել բոլոր տեսչութիւնների կրեդիտները։

—

Վերայում կառուցվող ռազմական նաւերի մասնաւոր դիմադիայի նոր շինութեան մի մասը մտադրվում է վերջացնել նոյեմբերի 20-ի մօտերը, և ապա իսկոյն տեղափոխել այնտեղ 2—3 բարձր դասարանները և բանակ նախապատրաստական դասարան։

—

Ռուս-եապօնական պատերազմում սպանված անձանց որոշ մասին տեղեկութիւններ ժողովող հանանգական կօմիտէի անդամ—քաղաքային վարչութեան կողմից ընտրվել է Մ. Վ. Լունկեվիչը։

—

Մոզդոկի քաղաքային վարչութիւնը մէջնորդութիւն է յարուցել Մոզդոկ քաղաքում բանալ արական և իգական միջնակարգ դպրոցներ, որոնց համար քաղաքը տալիս է շինութիւններ։ («Г. К.»)

—

Սմօլենսկում, նոյեմբերի 8-ին, մասնաւոր ընակարանում առանց իշխանութեան թոյլատրութեան կայացաւ կաղէտների կուսակցութեան կօմիտեի ժողովը։ Վրա հասած ժանդարմական ոստիկանութիւնը ցուցակագրեց ժողովին մասնակցողներին, նրանց թւում նաև վիրաբոյժների տեսչի օգնական Բակէեվին, ըէալական դպրոցի ուսուցիչ Պլեսնեվին, 3 զեմստվային ծառայողներին և Պետական Դումայի նախկին անդամ Կվասկովին։ Այսօր Բակէեվը հեռացված է իր պաշտօնից. քաղաքային վարչութիւնը առաջարկված է հեռացնել այն ծառայողներին, որոնք պատկանում են սահմանադիր-ռամկավար կուսակցութեանը. Պլեսնեվի գործողութիւնների մասին յայտնված է ուսումնարանական վարչութեանը։ («Ռ. Հեռ. Գ.»)

—

Ֆինլանդական կառավարչական շրջանների կարծիքով Ֆինլանդիայում ներկայումս տեղի ունեցող ընտրողական պայքարը խիստ կերպով որոշվելով ազգանակութեան առանձին դասակարգերի և խմբակների քաղաքական դէմքը, հետևաբար կերպով է պատկերացնում առաջիկայ սէյմի պատգամաւորների կուսակցական խմբակցութիւնը. Ֆինլանդական սէյմի 200 պատգամաւորական տեղերից 130-ը կը գրաւեն սահմանադրական կուսակցութիւնների ներկայացուցիչները, որոնց թւում 30 տեղ կը բռնեն սոցիալ-դեմօկրատները։ Սէյմի մնացեալ անդամները, ֆինլանդական կառավարութեան ներկայացուցիչների կարծիքով, կը լինեն կօնսերվատօր-ստարօֆինններ։

—

Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը Շաուֆուսը ներկայացրել է մինիստրների խորհրդին մի լրացուցիչ նախահաշիւ ևս 10 միլ. ռուբլու, բացի այն 33 միլլիօնից, որ նա արդէն ներկայացրել էր պօստատար գնացքների պահպանութեան և պատժողական երկաթուղային զօրամասերի համար։ Որովհետև ֆինանսների մինիստրը դեռ 33 միլիօնի համար բողոքել էր, այդ պատճառով ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը անձամբ մակագրեց այդ զեկուցման վրա, որ ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը լիովին ինքնուրոյն է ու անկախ և կարող է այդ հարցի առիթով նշանակութիւն չը տալ ֆինանսների մինիստրութեան կարծիքին։ («Утр. Почта»)

—

Մարիօվից հաղորդում են ներքին գործերի մինիստրութեանը, որ նորակոչ զինուորների մի խումբ, հաւաքվելով համալսարանի առաջ, ճառախօսներ է, պահանջում։ Նորակոչների մօտ խմբվել էր ժողովրդի ահագին բազմութիւն։ Իսկոյն համալսարանի մօտ են կանչվել զօրքերը և ոստիկանութիւնը։ Աւագների խորհրդի անդամներից մի քանիսը, դուրս գալով պատշգամբը, ուսանողութեան անունից խնդրում են ամբոխին ցրվել ու խուսափել ապրնեներութիւնից։ Ամբոխը խաղաղ կերպով ցրվում է խլոյն, առանց որևէ զոհ տալու։ («Страна»)

—

Պետական Դումայի ընտրողական օրէնքների վերաբերեալ սենատ՝ տուած բացատրութիւններին հետևից ներքին գործերի մինիստրութեան բացատրութիւնները. այժմ էլ ընտրողական օրէնքների կատարելագործութեամբ զբաղվում է ոստիկանութիւնը։ «Волгарь» *լրագիրը հաղորդում է, որ Նիժեգորոդեան նահանգի Արզամասի մասի խպրավնիկը առաջարկել է քաղաքային վարչութեանը ընտրողական անուանացուցակի մէջ մտցնել Արզամասի ոստիկանական պաշտօնեաներին, այսինքն, հէնց իրան խպրավնիկին, իր օգնականին, պրիստաւներին, ոստիկանական վերահսկիչներին և այլն։ Խպրավնիկին, ի հարկէ, լաւ յայտնի պէտք է լինէր ընտրողական օրէնքների 8-րդ յօդուածը, որը արգելում է ոստիկանական պաշտօնեաներին մասնակցել ընտրութիւններին ոչ միայն այն գաւառի սահմաններում, ուր նրանք ծառայում են, այլ և ամբողջ գաւառում, բայց, երևի, այդ յօդուածը նրան չէ բաւականացնում, և նա փորձ է արել անձամբ «բացատրել» օրէնքները։ Կաղանի ոստիկանապետը նոյնպէս տարօրինակ կերպով է ընդունում ընտրողական օրէնքները և, ինչպէս հաղորդում է* «Рус. Сл.» *լրագիրը յայտնի չէ թէ ինչ հիման վրա պահանջել է քաղաքային վարչութիւնից ներկայացնել իրան ընտրողական ցուցակները ստուգութեան համար։ Վարչութիւնը հրաժարվել է կատարել այդ պահանջը և դրանով էլ զրկել է ոստիկանապետին ստուգութիւն կատարելու հնարաւորութիւնից, որը, կարելի է նախապէս կարծել, չափազանց հիմնաւոր պէտք է լինէր։*

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

8 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 նոյեմբերի։ «Բէպ» *լրագրի նոյեմբերի 7-ի համարում Ն. Ն. Կուտլերը մի յօդուած էր զետեղել, որի մէջ խօսվում է սահմանադիր-ռամկավարների այն միջնորդութեան անաջողութեան մասին, որ արել էին մինիստրների խորհրդի նախագահին, որպէսզի թոյլատրվի իրանց՝ բաց ալ կադէտների կլուբ։ Այդ առիթով* «Россія» *լրագիրը մի յօդուած է նուիրել «Պատասխան հարցերին» խորագրով, որով առարկում է Կուտլերին կէտ առ կէտ։ Նախ և առաջ Կուտլերը հաւատացնում է, որ կառավարութիւնը անհեռևողական է սահմանադիր-ռամկավարների մէջ դեկավարվին օրէնքով, այլ որպէսզի հէնց միութեան բուն նպատակը չը հակասէ օրէնքներին։ Երրորդ, կադէտները ասում են, որ օրէնքը չը պէտք է նրանց զրկէ իւրաքանչիւրին տուած իրաւունքից. բայց եթէ ամեն մէկը կարող է դաշնակցութիւններ հաստատել և ժողովներ կայացնել, բայց և այնպէս նրանց նպատակները անփոփոխ չը պէտք է հասանեն օրէնքին։ Չորրորդ, Կուտլերը գրում է, որ կառավարութիւնը սկզբունքով աչքի առաջ չունի կատարել ժողովրդի ընտրեալի ցանկութիւնները, բայց իշխանութիւնը չէ կարող—նոյնիսկ ժողովրդի ընտրեալների ցանկութիւնները կատարելու. ժամանակ—խախտել օրէնքը. այն ժամանակ ինչը կը կոչվի կամայականութիւն։ Հինգերորդ, Կուտլերը մոռացել է, որ երբ սոցիալիստները բանակցութիւններ էին վարում նրա հետ, խօսքը իսկապէս տերրիտորիայի մասին էր. վերջապէս, նա մոռացել է նախազգուշացնել կաբինետի պարագլխին, որ մի քանի կդկուռը խօսակցութիւն քաղաքական ընդհանուր հարցերի մասին անմիջապէս նրանց լրագրային ինտերվիւի ձևի և խօսակցութեան նոյնիսկ կը տրվի կուսակցական ընոյթ։*

ՊԱՐԻԶ, 8 նոյեմբերի։ Սենատում Վիլլէնիէն երկաթուղային զօրամասերի համար։ Որովհետև ֆինանսների մինիստրը դեռ 33 միլիօնի համար բողոքել էր, այդ պատճառով ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը անձամբ մակագրեց այդ զեկուցման վրա, որ ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը լիովին ինքնուրոյն է ու անկախ և կարող է այդ հարցի առիթով նշանակութիւն չը տալ ֆինանսների մինիստրութեան կարծիքին։ («Утр. Почта»)

—

Մարիօվից հաղորդում են ներքին գործերի մինիստրութեանը, որ նորակոչ զինուորների մի խումբ, հաւաքվելով համալսարանի առաջ, ճառախօսներ է, պահանջում։ Նորակոչների մօտ խմբվել էր ժողովրդի ահագին բազմութիւն։ Իսկոյն համալսարանի մօտ են կանչվել զօրքերը և ոստիկանութիւնը։ Աւագների խորհրդի անդամներից մի քանիսը, դուրս գալով պատշգամբը, ուսանողութեան անունից խնդրում են ամբոխին ցրվել ու խուսափել ապրնեներութիւնից։ Ամբոխը խաղաղ կերպով ցրվում է խլոյն, առանց որևէ զոհ տալու։ («Страна»)

—

Պետական Դումայի ընտրողական օրէնքների վերաբերեալ սենատ՝ տուած բացատրութիւններին հետևից ներքին գործերի մինիստրութեան բացատրութիւնները. այժմ էլ ընտրողական օրէնքների կատարելագործութեամբ զբաղվում է ոստիկանութիւնը։ «Волгарь» *լրագիրը հաղորդում է, որ Նիժեգորոդեան նահանգի Արզամասի մասի խպրավնիկը առաջարկել է քաղաքային վարչութեանը ընտրողական անուանացուցակի մէջ մտցնել Արզամասի ոստիկանական պաշտօնեաներին, այսինքն, հէնց իրան խպրավնիկին, իր օգնականին, պրիստաւներին, ոստիկանական վերահսկիչներին և այլն։ Խպրավնիկին, ի հարկէ, լաւ յայտնի պէտք է լինէր ընտրողական օրէնքների 8-րդ յօդուածը, որը արգելում է ոստիկանական պաշտօնեաներին մասնակցել ընտրութիւններին ոչ միայն այն գաւառի սահմաններում, ուր նրանք ծառայում են, այլ և ամբողջ գաւառում, բայց, երևի, այդ յօդուածը նրան չէ բաւականացնում, և նա փորձ է արել անձամբ «բացատրել» օրէնքները։ Կաղանի ոստիկանապետը նոյնպէս տարօրինակ կերպով է ընդունում ընտրողական օրէնքները և, ինչպէս հաղորդում է* «Рус. Сл.» *լրագիրը յայտնի չէ թէ ինչ հիման վրա պահանջել է քաղաքային վարչութիւնից ներկայացնել իրան ընտրողական ցուցակները ստուգութեան համար։ Վարչութիւնը հրաժարվել է կատարել այդ պահանջը և դրանով էլ զրկել է ոստիկանապետին ստուգութիւն կատարելու հնարաւորութիւնից, որը, կարելի է նախապէս կարծել, չափազանց հիմնաւոր պէտք է լինէր։*

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

8 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 նոյեմբերի։ «Բէպ» *լրագրի նոյեմբերի 7-ի համարում Ն. Ն. Կուտլերը մի յօդուած էր զետեղել, որի մէջ խօսվում է սահմանադիր-ռամկավարների այն միջնորդութեան անաջողութեան մասին, որ արել էին մինիստրների խորհրդի նախագահին, որպէսզի թոյլատրվի իրանց՝ բաց ալ կադէտների կլուբ։ Այդ առիթով* «Россія» *լրագիրը մի յօդուած է նուիրել «Պատասխան հարցերին» խորագրով, որով առարկում է Կուտլերին կէտ առ կէտ։ Նախ և առաջ Կուտլերը հաւատացնում է, որ կառավարութիւնը անհեռևողական է սահմանադիր-ռամկավարների մէջ դեկավարվին օրէնքով, այլ որպէսզի հէնց միութեան բուն նպատակը չը հակասէ օրէնքներին։ Երրորդ, կադէտները ասում են, որ օրէնքը չը պէտք է նրանց զրկէ իւրաքանչիւրին տուած իրաւունքից. բայց եթէ ամեն մէկը կարող է դաշնակցութիւններ հաստատել և ժողովներ կայացնել, բայց և այնպէս նրանց նպատակները անփոփոխ չը պէտք է հասանեն օրէնքին։ Չորրորդ, Կուտլերը գրում է, որ կառավարութիւնը սկզբունքով աչքի առաջ չունի կատարել ժողովրդի ընտրեալի ցանկութիւնները, բայց իշխանութիւնը չէ կարող—նոյնիսկ ժողովրդի ընտրեալների ցանկութիւնները կատարելու. ժամանակ—խախտել օրէնքը. այն ժամանակ ինչը կը կոչվի կամայականութիւն։ Հինգերորդ, Կուտլերը մոռացել է, որ երբ սոցիալիստները բանակցութիւններ էին վարում նրա հետ, խօսքը իսկապէս տերրիտորիայի մասին էր. վերջապէս, նա մոռացել է նախազգուշացնել կաբինետի պարագլխին, որ մի քանի կդկուռը խօսակցութիւն քաղաքական ընդհանուր հարցերի մասին անմիջապէս նրանց լրագրային ինտերվիւի ձևի և խօսակցութեան նոյնիսկ կը տրվի կուսակցական ընոյթ։*

ՊԱՐԻԶ, 8 նոյեմբերի։ Սենատում Վիլլէնիէն կշտամբանում է Կլէմանսօին այն բանում, որ նա իր աշխատակիցներ է ընտրել Պիկարին և Պիշօնին։ Կլէմանսօն պաշտպանում է Պիշօնի դիպլօմատիական փայլուն ծառայութիւնը և փառաւորում է Պիկարի ազնուական ծագումը, Պիկարի, որ կանգ չէ առնում ծառայութիւնից հեռանալու առաջ, որպէսզի դրանով հնարաւորութիւն ունենայ կատարել իր ծառայակցական պարտականութիւնը։ Ապա Կլէմանսօն յայտնում է, որ նրան հարկաւոր չէ յայտնել անգլօ-ֆրանսիական համաձայնութեան մասին, նա չէ հաւատում զինուորական կօնվենցիայի գոյութեանը։ Կլէմանսօն յանդիմանում է Վիլլէնիէին այն բանում, որ նա նրան թակարդ է պատրաստում, ցանկանալով կամ օրինակ բերել ֆրանսիական ժողովրդի անյուսալիութիւնը կամ ռազմի ընաւորութեամբ յայտարարութիւններ անել, և յայտնում է, որ նա չի պատասխանի այդ հարցին։ Իսկ ինչ վերաբերում է եկեղեցական գոյքերի ցուցակագրելուն, դա կատարվել է 10 վարչութիւններում, մնացածներում կը վերջնայ մինչև նոյեմբերի 30-ը. քանանեները պէտք է հնազանդվեն օրէնքին, ինչպէս և մնացած քաղաքացիները. զօրքերը կը հանգստանան, բայց եթէ նրանց վրա կը սկսեն կրակել, այն ժամանակ նրանք էլ կը սկսեն։ «Կառավարութիւնը չի յաղթվի երբէք, կարող եմ այդ բանը ձեզ շնորհաւորել» աւելացնում է Կլէմանսօն։ Վիլլէնիէն ասում է, որ մինիստրությունը չը վախէ, գոյութիւն ունի՞ արդեօք անգլօ-ֆրանսիական զինուորական կօնվենցիա թէ ոչ. հեռուը ցանկանում է, որպէսզի Կլէմանսօի ծիծաղը շուտով արտասուքի չը փոխվի, երբ հայրենիքը աւերակների կոյտ կը դառնայ... Ապա սենատը ձայների առաւելութեամբ՝ 213-ով ընդդէմ 32-ի ընդունում է հերթական գործերին անցնելու առաջարկը, վստահութիւն արտայայտելով մինիստրին։ Ջայների ահագին մեծամասնութեամբ անցնում է ընդունվում Զօլայի ամբիոնը Պանթէօն տեղափոխելու նախագծի քննութիւնը։ Սենատը վերջում ձեռնարկում է քննել մասնաւոր պատիժը վերացնելու օրինագիծը։

ՕԴԵՍՍԱ, 8 նոյեմբերի։ Մամուլի գործերի հսկիչը գրաւել է խաղաղ վերածնութեան Օդէսսայի կոմիտէի կոչից 2000 օրինակ։

ՅԷՏԻՆԷ, 8 նոյեմբերի։ Սկուպշէնայի մեծամասնութիւնը առաջարկեց իշխանին կաբինէտի կազմն գործը յանձնել վճռաբեկ դատարանի անդամներից Միխայիլ Իսանովիչին։

ՏՕԿԻՕ, 8 նոյեմբերի։ «Ասոցիէյթդ Պրէս» *լրագիրը Եապօնիայի ֆինանսները անբաւարար է համարում։* «Ասահի Սումբունը», *քննելով Եապօնիայի զինուորական պատրաստութիւնների հարցը, քննադատում է կառավարութեան քաղաքականութիւնը և զինված աշխարհի ներօպական սիստեմը, որ շարունակ և անվերջ ուժեղացնում է միլիտարիզմը, ընդունում է անյարմար Եապօնիային, որը պէտք է շահագրգիռ քաղաքականութիւն վարէ։*

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 նոյեմբերի։ (Յաջողած է տեղեկութիւն ստանալու համար)։ «Օրէնքների ժողովածու» *մէջ հրատարակված են Բարձրագոյն ուկազներ, մէկը—Կուբանի շրջանը զինուորական զրութեան մէջ յայտարարելու, միւսը 1905 թ. դեկտ. 29-ին, 1905 թ. մարտի 18-ին, 20-ին և 23-ին և ապրիլի 25-ին սենատին տուած ուկազների գործողութիւններ պահելու, ինչպէս և Պետական Դումայի ընտրութիւնների ժամանակ կառավարչական սենատին 1906 թ. յուլիսի 8-ին տուած ուկազը գործադրելու մասին։*

9 նոյեմբերի

ԲԵՐԼԻՆ, 8 նոյեմբերի։ Զօրանդէսային ներկայացումից յետոյ դանիական կայսերական խումբը երեկոյեան 11½ ժամին մեկնեց Կոպենհագէն։

ԿԷՕԼՆ, 8 նոյեմբերի։ «Կէօլնիշէ—Ցայտունգ» *լրագիրը Բերլինից հաղորդում է, որ Նօրվէգիան մտադիր է բոլոր մեծ պետութիւններին, ի մէջի այլոց Ռուսաստանին, չէզոքութեան մի պայմանագիր կապել։ Արժանահաւատ տեղեկութիւններին նայած, Գերմանիան Նօրվէգիայի այդ ցանկութեանը բարեկամաբար է վերաբերում։*

ՊԱՐԻԶ, 8 նոյեմբերի։ Պատգամաւորների պալատը երկար վիճաբանութիւններից յետոյ մասնաժողովին յանձնեց շաբաթական հանգստեան օրէնքը փոփոխելու առիթով Բէրրի կազմած առաջարկը։

ՄԱՌԻՍ, 8 նոյեմբերի։ Լուրերի համաձայն, ծովային մինիստրը մինիստրների ժողովին յայտնել է, որ «Պէյլանն» զրահանաւը Տանժէր կուղարկվի 500 նաւաստիներով Ֆրանսիական նաւերի հետ միացնելու նպատակով և անհրաժեշտութեան դէպքում աջակցութիւն ցոյց տալ Սպանիայի ափերի մօտ հսկող անգլիական էսկադրան նոյնպէս անմիջապէս կը գնայ Տանժէր։ Մարոքգեների կողմից նկատված որևէ թշնամական վարմունք ազդանշան կը լինի—ափ հանել բոլոր օտարազգիների նաւերի զօրքերը։ Միջնադէպեր հնարաւոր են համարվում—ի նկատի առնելով բայսուլների գործելակերպը։ Ծովային մինիստրը յայտնել է, որ բոլոր մեծ պետութիւններն էլ ծովային գործերի նկատմամբ մի կերպ են մտածում։

ՎԱՐՇԱՎԱ, 8 նոյեմբերի։ Երէկ երեկոյեան Միլիյ կոչվող փողոցում համախմբվել են հրեայ երիտասարդներ. պահակախմբի երևալուն պէս, նրանք սկսել են փախչել։ Զինուորների աղաղակներին՝ «կանգնեցէք»—հրեաները ուշադրութիւն չէին դարձրել։ Այն ժամանակ զինուորները կրակել են և սպանել մէկին, վիրաւորել երկուսին։

ԲԵՐԼԻՆ, 8 նոյեմբերի։ Կենտրոնը հրաժարվեց պաշտպանել լիներ՝ Պօղնանի դպրոցների գործադուլի առիթով արած հարցապնդումը։

ՊԱԼԻԴՕՐՕԴ, 8 նոյեմբերի։ Բանտի կառավարիչ Կարամզինովը իրան գնացքի տակը գցեց։ Պատճառը անյայտ է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 նոյեմբերի։ Գտնված է զէնքերի պահեստ։ Ձերբակալված են 4 հոգի։—Զինուորական մինիստրը հրամայեց բանալ բժշկական ակադէմիան։

ԿԻԵՎ, 8 նոյեմբերի։ Պատերազմա-դաշտային դատարանը գործում է եռանդով։ Նոյեմբերի 8-ին նրա վճռով կախաղանի են դատապարտվել 2 հոգի սպանութեան համար։

ԲՈՒՏԱՊԵՇՏ, 8 նոյեմբերի։ Ժամանեց Ցարևոց Ցեսէվի կայսրը և կը մնայ մօտ մէկ ամիս։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 նոյեմբերի։ Նոյեմբերի կէսերին լոյս է տեսնելու «Слово» *լրագիրը Մ. Մ. Փէօդորովի խմբագրութեամբ, որը, ինչպէս յայտնի է, առաջի մինիստրութեան նախկին կառավարիչն է և որը հիմնել և երկար տարիներ խմբագրել է* «Промышленная Газета» *լրագիրը։*

ՊՕՐՏՍՄՈՒԹ, 8 նոյեմբերի։ Ապտամբ նաւաստիները յանձնված են զինուորական դատարանին։ Քննութիւնը կը սկսվի նոյեմբերի 10-ից։

ՄՕՍԿՎԱ, 8 նոյեմբերի։ Կայացաւ Մոսկվայի նահանգի հոկտեմբերի 17-ի դաշնակցութեան ներկայացուցիչների ժողովը։ Ալէքսանդր Գուչկովը ճառ արտասանեց, որի մէջ մատնանշեց ընկերութեան միացման անհրաժեշտութիւնը, ուշադրութիւն չը դարձնելով կուսակցութեան եռանդի վրա—ընդհանուր թշնամի ձախակողմեան կուսակցութիւնների դէմ։—Բնակիչ գործարանի գրասենեակը ներս խուժեցին 6 զինված անձինք և ժողովեցին գանձարկղից 7000 ռուբ.։ Կողոպտիչներից երկուսը բռնվեցին. նրանցից մէկի մօտ գտնվեցին սոցիալ-դեմօկրատական բանաւորների կուսակցութեան գանձարանի լիակատար հաշիւը, Մոսկվայի բոլոր գործարանների բանաւորների ռոճիկներից վերցրած տոկոսների հաշիւ։

ՎԻԵՆՆԱ, 8 նոյեմբերի։ Պատգամաւորների պալատը ընդունել է ընտրողական օրէնքի 5-րդ յօդուածը և ձայների առաւելութեամբ՝ 201-ով ընդդէմ 143-ի մերժել է կենտրոնի՝ գանազան վիճակներում ձայների միաժամանակ տալու սիստեմ մտցնելու առաջարկը։

—

Պետական ազնուական հողային բանկի 5% զրաւագրերի հանգցման տիրաժը *1906* թ. նոյեմբերի 1-ին։

Սերիաների համարներ	Սերիաների համարներ	Սերիաների համարներ	Սերիաների համարներ
15663	14485	4680	5793
5928	15658	14603	8221
679	1710	300	2380
2465	4232	1443	2766
13043	12673	5384	6959
4690	3851	9810	7398
4017	2205	1383	1161
417	13582	15839	8790
1507	9548	15823	11651
1041	13297	14073	4657
14960	11592	3630	14820
10236	15640	9287	10064
5995	8876	9659	6997
15768	6445	9301	2266
1759	3869	2368	1517
7555	6767	9118	769
1147	8102	3673	12785
6374	11397	10648	13311
6704	5660	1100	6440
14694	929	14950	3911
4955	4437	9396	12479
2344	7535	14338	14310
896	3760	7815	6315
6851	10842	5471	11705
14696	10759	10309	1192
6298	13448	86	6883
925	11411	589	13305
8870	537	15082	11254
4573	6712	9044	11462
8044	4520	4148	11467
5429	14829	4597	74817
9871	11514	1829	4954
15234	6400	4891	6493
3801	14049	667	9603
6046	3088	4035	11290
1009	7589	7366	3719
5889	10708	10481	6464
12798	10446	7875	7231
15386	1519	7892	14542
15752	15783	6920	3192
11776	331	10352	13666
15459	625	6411	5942
3140	7712	9696	5648
10351	7189	1168	4632
3977	12195	3368	12153
8883	2485	7259	4823
7550	4134	8892	10903
4879	5103	8207	3104
10951	4766	1199	5585
4411	12131	3303	12953
9571	13387	14772	7344
5476	12388	4049	8611
671	8406	14830	13605
14567	1816	12302	578
13980	3610	13089	14109
7387	12386	7801	4127
15114	5708	626	4477
5119	14101	3196	308
7114	13319	715	6429
5865	2863	13018	10374
1444	8912	12185	7148
11193	10347	15608	13249
7940	3185	2635	5863
8589	4917	13485	2126
7082	2963	5116	13662
10789	1267	12894	11089
10719	1234		

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880
(Կուկիա, Լօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերի
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վեներական (սիֆիլիս) մկղատեռ. հ.։
Կ. Մ. ՁԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական և վերաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ի. Կ. ԳԶԵԼԻՆՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿՆՈ-ԲԹԻՇԿ Ա. Ի. ՇՂԵՐԲԻՆՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ե. Դուրդենով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկաց.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Շաբաթ, նոյեմբերի 11-ին
Անդամների, կանդիդատների և նրանց ընտանիքների համար կը ներկայացվի՝
Վրացերէն լեզուով
ՁԱՐՔ
Կամ. 2 գործ. 3 գաղափար.
ՄԿՆԻԿԸ
Վոդեվիլ 1 գործողութեամբ
Հիւրերը ընդհանուր հիման վրա վճարում են՝ տղամարդիկ 1-ական ռուբլի, իսկ կանայք 50-ական կոպէկ։
Աշակերտներին մուտքը չէ թոյլատրվում։
Ներկայացման սկիզբն է ժամը 8½-ին։
Ներկայացման վերջը
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ
(ու. շ.) 1—2

ՀՐԱՒԷՐ
Նոյեմբերի 12-ին, կիրակի, առաւօտեան ժամը 12-ին Թիֆլիսի Կաթուղիկէ ս. Աստուածածնի եկեղեցումը ժողով է լինելու նոր երէցփոխան ընտրելու, ուստի յարգոյ ծխերը կրկին անգամ հրաւիրվում են ներկայ լինել յիշեալ եկեղեցումն ընտրութեանը մասնակցելու։
Գործակալ՝ Գրիգոր աւ.-քահ. Մանդակունի
(ու. կ.) 1—2

ԱՅՍ ՕՐԵՐՍ ԼՈՅՍ ՏԵՍԱՆԻ
„АРМЯНСКАЯ МУЗА“
Сборникъ, изданный подъ редакціей
Ю. Веселовскаго и проф. Г. Халатянца
при участіи русскихъ поэтовъ.
МОСКВА, 1907, ЦѢНА 1 Р.
СКЛАДЪ изд. Москва, Б. Каменн. мостъ, д. Куракиныхъ, кв. 40, Ю. Веселовскаго.—ВЪ ТИФЛИСѢ можно получать: у «Гуттенберга» (Галустяна